ՀԻՄՔԵՐ

ՋՈՆ ԲԻՎԵՐ

Թանկագին բարեկամ

Շնորհավորում եմ: Բարի գալուստ Աստծո ընտանիք: Այս պահից դու սկսում ես քո կյանքի ամենանշանակալի ճամփորդությունը: Սա միայն սկիզբն է:

Երբ մարդը վերստին ծնվում է, նրա ներսում անմիջապես նոր հոգևոր բնություն է ստեղծվում, որի աճի համար հոգևոր սնուցում և հիմնարար ուսմունք են հարկավոր: Աստծո Խոսքը մեր անձերին տալիս է այն սնուցումը, որի կարիքն ունենք և ցանկանում ենք: Ընթերցիր և ուսումնասիրիր Աստվածաշունչը: Առաջարկում եմ սկսել Նոր Կտակարանից: Միացիր Աստվածաշնչի ուսումնասիրության որևէ խմբակի, որտեղ քեզ համար կմեկնեն Աստծո Խոսքը, և այն կկենդանանա քո կյանքում:

Հոգևոր աճը ինքնաբերաբար տեղի չի ունենում. աճի և զարգացման համար անհրաժեշտ է նպատակաուղղվածություն: Քաջալերում եմ, որ այս ոգևորիչ նորությունը հաղորդես մեկ այլ հավատացյալի: Կարևոր է նաև միանալ Աստվածաշնչին հավատացող տեղական եկեղեցու և ունենալ համայնք, որը կքաջալերի քեզ քո նոր հավատքի մեջ:

Սիրով,
Ջոն



JohnBevere@ymail.com

Messenger INTERNATIONAL

MessengerX.com

ՀԻՄՔԵՐ

ՋՈՆ ԲԻՎԵՐ

Foundations, Armenian, by John P. Bevere
© 2024 Messenger International
MessengerInternational.org

Originally published in English as *Foundations*
Additional resources in Armenian are available for free download
and video streaming at **MessengerX.com** and on the **MessengerX** app
To contact the author: JohnBevere@ymail.com
This book is a gift from Messenger International and is
NOT FOR SALE

Printed in Armenian

«Հիմքեր», հայերեն, Ջոն Բիվեր
© 2024 Messenger International
MessengerInternational.org

Բնագիրը՝ անգլերենով
Հայերեն հավելյալ նյութեր անվճար ներբեռնման և հոսքային
հեռարձակման համար հասանելի են **MessengerX.com** կայքում
և **MessengerX** հավելվածում:
Հեղինակի հետ կարող եք կապ հաստատել՝ գրելով
JohnBevere@ymail.com հասցեին:
Այս գիրքը նվեր է «Messenger International»
ծառայության կողմից և ՎԱՃԱՌՔԻ ԵՆԹԱԿԱ ՉԷ

Տպագրված է Հայաստանում

Հասանելի է App Store

Հասանելի է Google Play

App Store-ը Apple Inc.-ի ապրանքանիշն է, որը գրանցված է ԱՄՆ-ում և այլ երկրներում:
Google Play-ը և Google Play-ի պատկերանիշը Google LLC-ի ապրանքանիշերն են:

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Հիմքեր 5

Ապաշխարություն մեռած գործերից. 14

Հավատք Աստծո հանդեպ 22

Մկրտություններ 27

Ձեռնադրություն. 40

Մեռելների հարություն. 46

Հավիտենական դատաստան. 55

ԳԼՈՒԽ 1

Հիմքեր

Ցանկացած կառույցի առաջին և ամենակարևոր բաղկացուցիչը հիմքն է: Լավ հիմքով կառույցը կարող է հազարավոր մետրեր վեր խոյանալ: Հիմքով է որոշվում՝ ամուր է շինությունը, թե ոչ:

Ձեր կյանքը, ինչ-որ իմաստով, Աստծո շինվածքն է: Դուք գլուխգործոց եք՝ նախագծված Աստծո կողմից՝ այս աշխարհին հայտնելու Նրա ճանապարհները (տե՛ս Եփեսացիների 2.10): Սուրբ Գիրքը հաճախ է համեմատում մեր կյանքերը շինության հետ:

> «Միասին մենք Նրա տաճարն ենք՝ կառուցված առաքյալների և մարգարեների հիմքի վրա: Իսկ անկյունաքարը Հիսուս Քրիստոսն է: Մենք զգուշությամբ միավորված ենք Նրանում՝ դառնալով սուրբ տաճար Տիրոջ համար» (Եփեսացիների 2.20,21, NLT):

> «...Դուք Աստծո շինվածքն եք: Ինձ տրված Աստծո շնորհքի չափով փորձառու շինարարի նման հիմք դրեցի: Եվ հիմա ուրիշները կառուցում են այդ հիմքի վրա: Միայն թե այս հիմքի վրա կառուցողը պետք է շատ զգույշ լինի» (Ա Կորնթացիների 3.9,10, NLT):

> «Բայց դուք, սիրելինե՛ր, ձեր անձերը ձեր սուրբ հավատքի [հիմքի] վրա կառուցե՛ք [շարունակաբար առա՛ջ ընթացեք և շինության պես ավելի ու ավելի վե՛ր խոյացեք]» (Հուդա 20, AMPC):

Մի առիթով ես և Լիզան ընթրում էինք մեր ընկերների տանը, երբ պատին հատակից դեպի առաստաղը ձգվող խոշոր ճաքեր նկատեցինք: Հետաքրքրությունից դրդված՝ հարցրի, թե ինչպես են այդ ճաքերն առաջացել, ինչին մեր ընկերները վրդովված պատասխանեցին, որ տան հիմքը լավ չի դրվել, քանի որ շինարարը

խնայողաբար է օգտագործել նյութերը: Ցավոք, խնդիրը լուծելը շատ թանկ և ժամանակատար գործընթաց էր: Այդ պահից ի վեր խոր գիտակցեցի ամուր հիմք ունենալու կարևորությունը: Հիմքի կառուցումը շինարարության գործընթացի ամենից հրապուրիչ մասը չէ, սակայն ամենակարևորն է:

Իտալիայի Պիզայի աշտարակը միջնադարյան ամենանշանավոր ճարտարապետական կառույցներից է: Դրա շինարարությունը սկսվել է 1173 թվականից: Այն նախագծվել է որպես 185 ոտնաչափ բարձրությամբ շրջանաձև զանգակատուն: Աշտարակը կառուցված է սպիտակ մարմարից, ունի ութ հարկ՝ ներառյալ զանգերը: Այդուհանդերձ, բազմաթիվ զբոսաշրջիկներ ավելի շատ գալիս են տեսնելու շինության՝ ի սկզբանե չնախագծված թեքությունը, քան գեղեցիկ ռոմանական ճարտարապետությունը:

Տարվա ցանկացած օր, անկասկած, կարելի է տեսնել զբոսաշրջիկների լուսանկարվելիս՝ ստանալու հայտնի նկարը՝ ձեռքերը պարզած դեպի մեծ թեքություն ունեցող աշտարակն այնպես, ասես իրենք են պահում այն ընկնելուց: Հիմա սա զվարճալի տեսարան է զբոսաշրջիկների համար, սակայն վստահ եմ, որ նախագիծը հեղինակած ճարտարապետի համար զվարճալի չի եղել:

Շինարարության հինգերորդ տարում շինարարները հասել էին նախագծված ութ հարկերից երրորդին, երբ շինության հիմքը հողի վրա սկսել է թեքվել: Աշտարակը անմտորեն կառուցել էին կավի, ավազի և խեցիների խառնուրդից, ինչի հետևանքով այն նկատելիորեն ծռվել էր: Շինարարական աշխատանքներն անվտանգ շարունակելու անհնարինությունը հանգեցրեց դրանց գրեթե հարյուրամյա դադարին: Ի վերջո, շինարարությունը շարունակվեց և ավարտին հասցվեց 1372 թվականին: Ժամանակի ընթացքում վերակառուցման լայնածավալ աշխատանքների արդյունքում ինժեներներին հաջողվեց կայունացնել աշտարակը, սակայն թեքությունը երբեք չի հաջողվի շտկել:

Ակնհայտ է, որ առանց ամուր հիմքի ոչ մի շինություն

չի կարող ուղիղ մնալ. ճաքերն ու թեքությունն ի հայտ կգան ժամանակի ընթացքում: Նույնը վերաբերում է մեր կյանքերին Քրիստոսի մեջ:

ՀԻՍՈՒՍՆ Է ՄԵՐ ՀԻՄՔԸ

«Ուստի, ահա թե ինչ է ասում Ինքնիշխան Տերը. «Տեսեք, Ես եմ Երուսաղեմում դնում հիմքի քարը՝ ամուր և փորձված: Այն պատվական անկյունաքար է, որի վրա կառուցելն ապահով է: Ով հավատա, չի սասանվի»» (Եսայի 28.16, NLT):

Այն հիմքը, որի մասին խոսում է Եսային, ոչ այլ ոք է, քան Հիսուս Քրիստոսը: Ինչպես տեսանք, հիմքի որակը խիստ կարևոր է կառույցի կայունության և երկարակեցության համար: Հիմքի այն քարը, որի մասին Տերը խոսել է Եսայու միջոցով, փորձված քար է: Ինչ-որ բան փորձարկել նշանակում է միջոցներ ձեռնարկել՝ ստուգելու որակը և հուսալիությունը, հատկապես նախքան այն շահագործման հանձնելը: Այն, ինչ չենք փորձարկել, չենք կարող վստահությամբ գործածել:

Ամեն տարի ես հազարավոր մղոններ ճամփորդում եմ օդանավով: Եվ լիակատար վստահությամբ եմ ոտք դնում օդանավ, քանի որ գիտեմ՝ օդանավերը մինչև շահագործման հանձնելը փորձարկվում են խստապահանջ նորմերով: Այս ստուգումներն արվում են՝ սկսած վաղ նախագծման փուլերից՝ ապահովելու որակյալ և հուսալի փոխադրում ուղևորների համար դեպի աշխարհի ցանկացած կետ:

Հիսուսը բոլոր առումներով փորձվեց և չձախողվեց: Եբրայեցիների թղթի հեղինակն ասում է. «Աստված, Ում կողմից և Ում միջոցով ամեն բան ստեղծվեց, ընտրեց շատ որդիների փառքի մեջ տանել: Եվ դրա միակ արդար ճանապարհն էր Հիսուսին Նրա իսկ չարչարանքների միջոցով կատարյալ առաջնորդ կարգելը, քանի որ միայն Նա կարող էր նրանց փրկության առաջնորդել» (Եբրայեցիների 2.10, NLT): Ահա թե ին-

չու Հիսուսը ոչ միայն ընտիր, այլև ապահով Հիմք է, Որի վրա կարելի է կառուցել:

Հիսուսի մասին խոսելիս Պետրոս առաքյալը հաստատում է Եսայու մարգարեությունը. «Դուք գալիս եք Քրիստոսի մոտ, Ով Աստծո տաճարի կենդանի անկյունաքարն է... Իսկ Դուք կենդանի քարեր եք, որոնցով Աստված կառուցում է Իր հոգևոր տաճարը... Ինչպես Սուրբ Գիրքն էլ ասում է. «Ահա անկյունաքար եմ դնում Երուսաղեմում՝ ընտրված մեծ պատվի համար, և Նրան հավատացողը չի ամաչի»» (Ա Պետրոս 2.4-6, NLT): Պողոս առաքյալը համաձայնում է թե՛ Եսայու և թե՛ Պետրոսի հետ: Նա գրել է. «Որովհետև ոչ ոք ուրիշ հիմք չի կարող դնել, քան այն, որ դրված է, որը Հիսուս Քրիստոսն է» (Ա Կորնթացիների 3.11, NLT):

Հիսուսն է մեր հաստատուն Հիմքը:

Այժմ, երբ անդրադարձել ենք, թե ինչ է Սուրբ Գիրքն ասում Հիսուսի մասին՝ որպես մեր Փրկչի, թե՛ Հին և թե՛ Նոր կտակարաններում, եկե՛ք քննենք, թե Ինքը՝ Հիսուսն ինչ է ասել: Մատթեոսի Ավետարանի 16-րդ գլխում Հիսուսը գնում է Փիլիպպյան Կեսարիա և աշակերտներից հարցնում. «Մարդիկ ինձ համար ո՞վ են ասում, որ Մարդու Որդին լինի» (խոսք 13):

Աշակերտներից մի քանիսը արագ պատասխանեցին: Նրանց պատասխանն էր. «Ոմանք ասում են՝ Հովհաննես Մկրտիչը, ոմանք՝ Եղիան, ոմանք՝ Երեմիան, իսկ ոմանք ասում են, թե՝ մարգարեներից մեկը» (խոսք 14): Այն բանից հետո, երբ աշակերտները պատմեցին, թե մարդիկ ինչ էին ասում Իր մասին, Հիսուսը նայեց նրանց և ուղիղ հարց տվեց. «Իսկ դո՞ւք ինչ եք ասում Ինձ համար, Ո՞վ եմ» (խոսք 15):

Վստահ եմ, որ այս հարցը շանթեց նրանց սրտերը և շփոթմունքի մեջ թողեց. չգիտեին ինչ պատասխանել: Այս տղամարդիկ, որոնք այդքան անհամբերությամբ հնչեցրին ուրիշների պատասխանները, այժմ լուռ էին: Այս առերեսման հետ մեկտեղ նրանք գիտակցում էին, որ պատասխան չունեին՝ բացի այն իրողությունից, որ ուրիշների մտքերով և կարծիքներով էին ապրում՝ փո-

խարենը իրենց սրտերը հաստատելու այն ճշմարտության վրա, թե իրականում Ով էր Հիսուսը:

Սիմոնը, որին Հիսուսը վերանվանել էր Պետրոս, աշակերտներից միակն էր, որ կարողացավ ի սրտե պատասխանել այդ հարցին: Նա համարձակությամբ հռչակեց. «Դո՛ւ ես Քրիստոսը՝ կենդանի Աստծո Որդին» (խոսք 16): Ժպիտն ու փայլը աչքերում՝ Հիսուսը պատասխանեց. «Երանի՛ քեզ... որովհետև մարմինն ու արյունը չհայտնեցին դա քեզ, այլ Իմ Հայրը, որ երկնքում է» (խոսք 17): Թարգմանություններից մեկում ասվում է. «Իմ Հայրը գերբնական ձևով հայտնեց դա քեզ» (TPT):

Պետրոսի հայտնության աղբյուրը Ինքը Աստված էր, ոչ թե մարդկանց կարծիքները: Նա հայտնություն ստացավ անմիջականորեն Աստծուց: Ահա թե ինչ նկատի ուներ Հիսուսը՝ ասելով. «Միակ ճանապարհը, որով մարդիկ կարող են Ինձ մոտ գալ, Իմ Հայրն է, Ով ուղարկել է Ինձ. Նա է դեպի Ինձ ձգում նրանց սրտերը, որ ընդունեն Ինձ... Մարգարեները գրել են. «Բոլորը սովորած կլինեն հենց Աստծուց»: Եթե իսկապես լսում եք Հորը և անմիջականորեն Նրանից սովորում, ապա կգաք Ինձ մոտ» (Հովհաննես 6.44,45, TPT):

Ակներև է, որ Հիսուսի մասին ճշմարտության հայտնությունը պետք է արմատավորվի մեր սրտերում. «Եվ այս ճշմարտությունն այն մասին, թե Ով եմ Ես, կլինի այն ժայռը, որի վրա կկառուցեմ Իմ եկեղեցին՝ Իմ օրենսդրական ժողովը, և մահվան զորությունը չի կարողանա հաղթել նրան» (Մատթեոս 16.18, TPT): Հիսուսի մասին հայտնությունն այն հիմքն է, որի վրա եկեղեցին հաստատված է: Եթե այս ճշմարտությունն ամուր տնկված չլինի մեզանում, մենք հեշտությամբ կտատանվենք հասարակության կարծիքների ալիքներից:

Մի օր Հիսուսը հայտնեց որոշ ճշմարտություններ, որոնք շփոթեցրին և գայթակղեցրին Նրա հետևորդներին, ինչի հետևանքով շատերը թողեցին Նրան: Իսկ նրանց, ովքեր մնացին, այդ թվում Պետրոսը, Հիսուսը մարտահրավեր նետեց. «...Մի՞թե դուք էլ եք ուզում գնալ» (Հովհաննես 6.67-68): Պետրոսը, որ հաստատված էր հայտ-

նության իմացության վրա, պատասխանեց. «Տե՛ր, ո՞ւմ մոտ գնանք: Հավիտենական կյանքի խոսքեր ունես Դու: Եվ մենք հավատացինք ու ճանաչեցինք, որ Դու ես Քրիստոսը՝ կենդանի Աստծո Որդին» (Հովհաննես 6.69,70):

Պետրոսը եղավ օրինակ կայունության, որ հայտնությամբ հաստատված իմացությունից էր: Երբ մյուսները հեռացան Հիսուսից, նա մնաց: Նա համոզված էր, որ Հիսուսն Աստծո Որդին է, ինչը թույլ չտվեց, որ նա տատանվի: Նա հիմնված էր հայտնության Ժայռի վրա:

ՃՇՄԱՐՏՈՒԹՅՈՒՆԸ ԺԱՅՌ Է

«Արդ նա, ով Իմ այս Խոսքերը լսում է և կատարում, կնմանեցնեմ մի իմաստուն մարդու, ով իր տունը շինեց ժայռի վրա: Եվ անձրևն էլ եկավ, գետերն էլ վարարեցին, քամիներն էլ փչեցին և այն տանը զարկեցին, և այն չկործանվեց, որովհետև ժայռի վրա հաստատված էր: Եվ նա, ով Իմ այս խոսքերը լսում է և չի կատարում, նա կնմանվի մի անխելք մարդու, որ իր տունը շինեց ավազի վրա: Եվ անձրևն էլ եկավ, գետերն էլ վարարեցին, քամիներն էլ փչեցին և այն տանը զարկեցին, և այն կործանվեց, և դրա կործանումը մեծ էր» (Մատթեոս 7.24-27):

Աստծո Խոսքի վրա կառուցված կյանքը նման է ամուր հողի վրա կառուցված տան. այդ կառույցը մնայուն է: Տիրոջ ուսմունքը լսեցին թե՛ իմաստունը և թե՛ անխելքը. տարբերությունն այն էր, որ իմաստունը հնազանդվեց այն Խոսքին, որ լսել էր: Նույն կերպ, երբ մենք կառուցում ենք մեր կյանքը Աստծո Խոսքին հնազանդվելով, դա երաշխավորում է կայունություն:

Հակոբոս առաքյալը կրկնում է Հիսուսի խոսքերը՝ հիշեցնելով մեզ և՛ Աստծո Խոսքը լսելու, և՛ դրան հնազանդվելու կարևորության մասին. «Սակայն, արդարև մի՛ լսեք Աստծո Խոսքը, այլ արե՛ք այն, ինչ Խոսքն ասում է: Հակառակ պարագայում ինքներդ ձեզ եք խաբում: Քանի որ, եթե լսեք և չհնազանդվեք, դա նման կլինի հայելու մեջ նայելուն. տեսնում ես քեզ և հեռանում՝ մոռա-

նալով, թե ինչ տեսք ունես» (Հակոբոս 1.22-24, NLT):

Հակոբոսը համեմատում է Աստծո Խոսքը հայելու հետ: Բնական հայելու նպատակն է ցույց տալ մեր արտաքին տեսքը, իսկ Աստծո Խոսքի հայելին ցույց է տալիս մեր ներքին վիճակը: Այն մեր մասին բացահայտում է բաներ, որոնք ոչ մի բնական հայելի չի կարող ցույց տալ: Չմոռանանք, որ հայելին պիտանի է, քանի դեռ մեր տեսածի հիման վրա ինչ-որ բան ենք անում: Օրինակ, եթե հայելու մեջ տեսնում եք, որ ձեր մազերը խառնված են, կամ ատամների արանքում սննդի մնացորդներ կան, ձեր բնական արձագանքը պետք է լինի մազերը հարդարելը և ատամները մաքրելը:

Նույնը ճշմարիտ է նաև Աստծո Խոսքի հայելու մեջ մեր արտացոլանքի վերաբերյալ: Խոսքը հանդիմանում և խրատում է՝ մեզ հրահանգելով ինչպես արդար ապրել: Պողոսը գրել է. «Ամեն Գիրք... օգտակար է վարդապետության և հանդիմանության և ուղղելու և արդարության խրատելու համար, որ Աստծո մարդը կատարյալ լինի՝ ամեն բարի գործի համար պատրաստված» (Բ Տիմոթեոս 3.16,17): Նույն կերպ, Եբրայեցիների թղթի հեղինակը գրել է. «Որովհետև Աստծո Խոսքը կենդանի է և զորավոր և ամեն երկսայրի սրից ավելի կտրուկ է և թափանցում է մինչև շնչի և հոգու և հոդվածների և ծուծի բաժանվելը: Եվ քննող է սրտի մտքերը և խորհուրդները» (4.12):

Բարեկա՛մս, չեմ կարող բավականաչափ շեշտադրել, որ Աստծո Խոսքը մեզ համար օգտակար կլինի միայն այն ժամանակ, երբ մեր արձագանքը լինի հնազանդությունը: Սա նշանակում է, որ պետք է անհրաժեշտ փոփոխություններն անենք, որպեսզի մեր կյանքերը համապատասխանեն Աստծո ճանապարհներին: Երբ մեր սրտերը հաստատվում են Հիսուսի մասին հայտնության վրա, մենք շարունակում ենք հնազանդության միջոցով կառուցել մեր կյանքերը Նրա հիմքի վրա:

Հիմքը փորելու աշխատանքներից սկսած՝ շինարարները պետք է հետևեն հատուկ հատակագծին, որը նախագծել են ինժեներները: Նույնպես էլ Աստված՝

Գլխավոր Շինարարը, ունի մեր կյանքերի հատուկ հատակագիծն ու շինարարական նախագիծը, որոնց կարող ենք ծանոթանալ՝ Նրա Խոսքն ուսումնասիրելով և Նրա Հոգուն հանձնվելով:

Աստծո Խոսքի հիմնարար ճշմարտությունները, որոնց վրա պետք է կառուցենք մեր կյանքերը, շարադրված են Եբրայեցիների գրքում և հաստատված են ամբողջ Նոր կտակարանում: Վեցերորդ գլխում կարդում ենք.

> «Ուստի, Քրիստոսի մասին սկզբնական խոսքը թողնելով, դեպի կատարյալը գանք՝ առանց կրկին հիմք դնելու մեռած գործերից ապաշխարության և Աստծուն հավատալու համար և մկրտությունների ուսմունքի և ձեռք դնելու և մեռելների հարության և հավիտենական դատաստանի համար: Եվ սա անենք, եթե Աստված հրաման տա» (Եբրայեցիների 6.1-3):

Ահա՛ այն վեց հիմնարար ուսմունքները, որոնց վրա պետք է կառուցենք.

1. Ապաշխարություն մեռած գործերից
2. Հավատք Աստծո հանդեպ
3. Մկրտություններ
4. Ձեռնադրություն
5. Մեռելների հարություն
6. Հավիտենական դատաստան

Յուրաքանչյուր հավատացյալ պետք է հիմնված և հաստատված լինի այս հիմնարար ճշմարտությունների վրա, որպեսզի կարողանա հասունանալ Քրիստոսում: Առանց այս հիմնարար ճշմարտությունների կառուցելը կարելի է համեմատել կրթական բարձունքների ձգտելու հետ, երբ չունես տարրական կրթություն, ինչպես, օրինակ՝ կարդալու և գրելու կարողություն:

Ցավոք, շատերն անտեսել են այս տարրական ճշմարտությունները, ինչի հետևանքով հոգևորապես չեն աճել և, որ ամենավտանգավորն է, շեղվել են: Եթե ներկայացված հերթականությամբ վերլուծենք հիմքային ուսմունքների այս ուրվագիծը, կտեսնենք, որ այն

սկսվում է մեղավոր մարդու՝ քրիստոնեական կյանք մտնելուց (ապաշխարություն) և աճում դեպի հարություն ու վերջին դատաստան:

Գրքում կուսումնասիրենք նշված հիմնարար ճշմարտություններից յուրաքանչյուրը, որպեսզի կարողանանք աճել Քրիստոսի լիության մեջ:

Եկեք իմաստությամբ կառուցենք:

////////////////////////////////////

ՔՆՆԱՐԿՄԱՆ ՀԱՐՑԵՐ

1. Ո՞րն է շինարարության ամենակարևոր փուլը և ինչո՞ւ:
2. Ինչո՞ւ է հոգևոր աճի համար այդքան կարևոր Հիսուսին տեսնելը որպես ձեր Հիմքի:
3. Մատթեոս 7.24-27-ում Հիսուսը սովորեցնում է իմաստուն և անխելք շինարարների մասին: Ո՞րն էր իմաստուն և անխոհեմ շինարարների տարբերությունը: Ինչո՞ւ է սա կարևոր:

ԳԼՈՒԽ 2

Ապաշխարություն մեռած գործերից

«Ուստի, Քրիստոսի մասին սկզբնական խոսքը թողնելով, դեպի կատարյալը գանք՝ առանց կրկին հիմք դնելու մեռած գործերից ապաշխարության…» (Եբրայեցիների 6.1):

Ըստ Եբրայեցիների թղթի հեղինակի՝ մեռած գործերից ապաշխարությունը առաջին հիմքն է, որի վրա կառուցվում է եկեղեցին: Ապաշխարությունը հարթեցնում է մեր սրտի հողը՝ պատրաստելով մեզ Աստծո նախագծի համաձայն կառուցելուն: Հնարավոր չէ ճշմարիտ և մնայուն հավատք ունենալ Աստծո հանդեպ առանց ապաշխարության:

«Ապաշխարություն» բառը հաճախ շփոթություն է առաջացնում. ուստի սահմանենք այն: Ամբողջ Նոր կտակարանում «ապաշխարություն» *(metanoia)* գոյականը և «ապաշխարել» *(metanoeo)* բայը հանդիպում են համապատասխանաբար քսանչորս և երեսունչորս անգամ: Ամենահայտնի և ընդունելի սահմանումն է «մտափոխությունը»: Այդուհանդերձ, եթե բավարարվենք միայն այս տարրական սահմանումով, ապա մեծ բան բաց կթողնենք:

Բեյքերի աստվածաշնչյան հանրագիտարանում գրված է, որ ապաշխարությունը «հենց մտքի փոփոխությունն է՝ ոչ թե անձնական ծրագրերի, մտադրություններ կամ համոզմունքների, այլ մարդու *ամբողջ անհատականության*՝ մեղավոր վարվելակերպից դեպի Աստված» (շեղագիր շեշտադրումն ավելացված է հեղինակի կողմից): Ուշադրությո՛ւն դարձրեք *«ամբողջ անհատականություն»* բառերին: Այս խոսքերով գիտ-

նականները ցույց են տալիս, որ ապաշխարությունն ավելին է, քան պարզապես մտափոխությունը: *Լեքսհեմի աստվածաբանական ձեռնարկը* շարունակում է այս բառի ուսումնասիրությունն ու պնդում, որ ապաշխարությունը «գործընթաց է, որում անհատը վերաուղղորդում է իր միտքն ու կամքը մեղքից դեպի Աստված»:

Ապաշխարությունը ներառում է միտքը, կամքը և հույզերը՝ թափանցելով մեր սրտերի խորքերը, որպեսզի մեր ամուր համոզվածությունը բխի մեր բուն էությունից: Ճշմարիտ ապաշխարություն տեղի է ունենում, երբ գիտակցում ենք մեր մեղավոր վիճակը: Այս հայտնությունը բնականոն ձևով փոխում է ինքներս մեր և Աստծո հանդեպ մեր ընկալումը, ինչպես նաև մեր ապրելակերպը: Ապաշխարության միջոցով մենք թողնում մեր ինքնակառավարվող ապրելակերպն ու դառնում դեպի բացարձակ հնազանդությունն Աստծուն:

////////////////////////////////////

Ամբողջ Նոր կտակարանում մեր հարաբերությունը Հիսուսի հետ համեմատվում է ամուսնության հետ: Եկեղեցին հարսն է, Հիսուսը՝ Փեսան: Եվ ինչպես ցանկացած լավ ամուսին, Հիսուսը ցանկանում է մեր լիարժեք նվիրումն ու հավատարմությունը:

Մի պահ պատկերացրե՛ք. մի երեկո Ջասթինը աշխատանքից վերադառնում է տուն և տեսնում, որ իր կինը՝ Անժելան, շպարված ու գեղեցիկ հագնված է: Ենթադրում է, որ կինը ինչ-որ հատուկ բան է ծրագրել իրենց համար, և առաջարկում է, որ ինքն էլ պատրաստվի: Անժելան ասում է. «Սիրելի՛ս, իրականում ես Թոնիի հետ եմ հանդիպելու այս երեկո: Կընթրենք, ֆիլմ կդիտենք և կգնանք հյուրանոց: Կվերադառնամ լուսադեմին»: «Ո՞վ է Թոնին»,- անհանգստացած հարցնում է Ջասթինը:

«Նա իմ զուգընկերն է՝ ավագ դպրոցից»,- պատասխանում է կինը:

«Ինչ: Դու չե՛ս կարող հանդիպել նրա հետ»:

«Իսկ ինչո՞ւ»:

«Քանի որ մենք ամուսնացած ենք. մենք մեկս մյուսին հավատարիմ մնալու որոշում ենք ընդունել և չենք հանդիպում այլ մարդկանց հետ»,- բացականչում է Ջասթինը՝ ասելով մի բան, ինչը կարծում էր, որ պետք է ակնհայտ լիներ:

«Սպասի՛ր, սպասի՛ր, թանկագի՛նս,- պատասխանում է Անժելան,- դու իմ ամենասիրելին ես: Ես քեզ սիրում եմ ավելի, քան իմ նախկին զուգընկերներից որևէ մեկին, սակայն դու չես կարող ակնկալել, որ ես այլևս չեմ հանդիպելու նրանց հետ: Նրանցից ոմանց հետ տարիներ շարունակ մտերիմ եմ եղել. ես դեռ սիրում եմ նրանց և ցանկանում եմ ժամանակ անցկացնել նրանց հետ: Ի՞նչ վատ բան կա դրա մեջ»:

Բնականաբար, անհեթեթ պատմություն է: Դժվար է պատկերացնել, որ ինչ-որ մեկը կարող է չհասկանալ, որ ամուսնությունը բացառիկ և փակ հարաբերություն է: Մեզնից ոչ ոք վստահաբար չէր ամուսնանա Անժելայի հետ, որն ակնկալում էր ամուսնությունից հետո էլ շարունակել ժամադրվել նախկին զուգընկերների հետ: Սակայն շատ քրիստոնյաներ հենց այդպես են վերաբերվում իրենց հարաբերությանը Հիսուսի հետ: Երբ մենք մարդկանց չենք հաղորդում Հիսուսի իշխանության և մեր հին կենսակերպից ապաշխարության կարևոր ճշմարտությունները, արդյունքը լինում է հետևյալը՝ շնացող հարս, որը չի հասկանում նվիրված և հավատարիմ լինելու կարևորությունը:

Երբ մենք անկեղծորեն ապաշխարում ենք, հրաժարվում ենք մեր ճանապարհներով գնալուց և լիովին ենթարկվում ու հնազանդվում ենք Աստծո իշխանությանը: Այլ կերպ ասած՝ հռչակում ենք. «Ես այլևս չեմ ընդունելու մտքեր, համոզմունքներ, պատճառաբանություններ կամ փաստարկներ, որոնք առավել բարձր են դասվում Աստծո Խոսքից և իմաստությունից»:

Հնարավոր չէ Աստծուն դառնալ առանց ապաշխարության: Իրականում, չենք կարող մեր հավատքն ուղղել Հիսուս Քրիստոսին, քանի դեռ չենք ապաշխարել գիտակց-

ված անհնազանդությունից: Ապաշխարության անհրաժեշտությունը շեշտադրված է ամբողջ Նոր կտակարանում: Ապաշխարությունն այլընտրանք չէ. այն պարտադիր պայման է՝ ակտիվացնելու Աստծո շնորհքը մեր կյանքերում: Այն պարգև է, որն ազատում է մեզ ճղճիմությունից, որպեսզի կարողանանք ապրել Աստծո լիության մեջ:

Սակայն շատ հաճախ ապաշխարությունը սխալ է մեկնաբանվում, և մարդիկ խուսափում են այդ գեղեցիկ բառն օգտագործելուց:

Տեսնենք, թե ինչպես են Պետրոսն ու Պողոսը ներկայացրել Ավետարանը.

> «Երբեք հետ չկանգնեցի ձեզ ասելուց այն, ինչ լսելու կարիք ունեիք՝ թե՛ հրապարակայնորեն և թե՛ ձեր տներում: Մեկ ուղերձ ունեմ հրեաների և հույների համար՝ մեղքերից *ապաշխարելու* և Աստծուն դառնալու *անհրաժեշտությունը* և մեր Տեր Հիսուսի հանդեպ հավատքը» (Գործք 20.20,21, NLT):

> «Ես հնազանդվեցի այդ երկնային տեսիլքին: Սկզբում քարոզեցի նրանց, որ Դամասկոսում էին, ապա՝ նրանց, որ Երուսաղեմում էին և ամբողջ Հրեաստանում, ինչպես նաև՝ հեթանոսներին, որ *բոլորը պետք է ապաշխարեն իրենց մեղքերից* և դառնան Աստծուն՝ իրենց բարի գործերով ապացուցելով, որ փոխվել են» (Գործք 26.19,20, NLT):

> «Վաղ ժամանակներում Աստված անտես արեց մարդկանց տգիտությունը այս բաների մասին, սակայն հիմա Նա բոլորին ամենուր պատվիրում է *ապաշխարել իրենց մեղքերից* և դառնալ դեպի Իրեն» (Գործք 17.30, NLT):

Պենտեկոստեի օրը Պետրոսն իր խոսքը սկսեց՝ հորդորելով նախանձախնդիր մարդկանց ինչպես փրկվել: Նա համարձակությամբ հռչակեց.

> «Ապաշխարե՛ք, և ձեզնից ամեն մեկը թող մկրտվի Հիսուս Քրիստոսի անունով՝ մեղքերի թողության համար, և Սուրբ Հոգու պարգևը կընդունեք» (Գործք 2.38):

Ցանկացած ուսմունք, որը չի ներառում ապաշխարության կոչ, մեղավորներին շեղում է և Աստծուն սխալ ներկայացնում՝ այնպես, ինչպես տեսանք Անժելայի պատմության մեջ: Ավետարանը պատմելու ժամանակակից ձևը, նախ և առաջ, այն է, որ փնտրողները հավատան և աղոթեն, ապա, ի վերջո, նրանց ներկայացվի մեղքերից ապաշխարելու գաղափարը, ինչը կարող է տեղի ունենալ շաբաթներ, ամիսներ կամ, նույնիսկ, տարիներ անց: Սակայն արդյո՞ք սա սուրբգրային մոտեցում է:

Սուրբ Հոգին է հայտնում մարդկանց, որ փրկության կարիք ունեն: Հիսուսն ասել է. «Երբ Նա գա, աշխարհին կհայտնի իր մեղքի, Աստծո արդարության և գալիք դատաստանի մասին: Աշխարհի մեղքն այն է, որ հրաժարվում է Ինձ հավատալուց: Արդարությունը հասանելի է, քանի որ Ես գնում եմ Հորս մոտ, և դուք Ինձ այլևս չեք տեսնի: Դատաստանը կգա, քանի որ այս աշխարհի իշխանը արդեն իսկ դատապարտված է» (Հովհաննես 16.8-11, NLT):

Մեր արձագանքը Սուրբ Հոգու հանդիմանությանը որոշում է, թե արդյոք մենք դառնում ենք Աստծուն: Խորհե՛ք երկու տարբեր արձագանքների վերաբերյալ երկու տարբեր արձագանքների շուրջ: Առաջինը տեսնում ենք այն բանից հետո, երբ Պենտեկոստեի օրը Պետրոսը քարոզեց Ավետարանը. «Եվ երբ որ սա լսեցին, իրենց սրտերում զղջացին և ասացին Պետրոսին ու մյուս առաքյալներին. «Ի՞նչ անենք, մարդի՛կ եղբայրներ»» (Գործք 2.37): Իսկ այժմ սա համեմատե՛ք այն արձագանքի հետ, որ Ստեփանոսը ստացավ Ավետարանը քարոզելուց հետո. «Եվ այս խոսքերը լսելով՝ իրենց սրտերում կատաղում էին և ատամները կրճտացնում նրա վրա» (Գործք 7.54):

Հանդիմանությունը բերում է կա՛մ ապաշխարություն (առաջին օրինակը), կա՛մ սրտի կարծրություն (երկրորդ օրինակը): Եթե արձագանքն ապաշխարությունն է, ապաշխարողը պատրաստում է իրեն՝ ստանալու Աստծո ողորմությունն ու շնորհքը, իսկ Աստծո քաղցրությունը նրան մղում է ապաշխարության (տե՛ս Հռոմեացիների 2.4): Ովքեր պատասխանեցին՝

«Ինչ պետք է անենք», պատրաստեցին իրենց՝ լսելու Ավետարանը (որը ներառում է ապաշխարությունը) և ընդունելու փրկությունը:

Պողոսը շարունակում է լույս սփռել ապաշխարության գեղեցկության վրա.

> «Որովհետև Աստծո ուզած կերպով տրտմությունը *ապաշխարություն է գործում* փրկության համար՝ առանց զղջալու, բայց աշխարհի տրտմությունը մահ է գործում: Որովհետև ահա հենց այն, որ դուք Աստծո ուզած կերպով տրտմեցիք, որքան ջանք գործեց ձեզանում, նաև արդարացում, նաև զայրույթ, նաև վախ, նաև փափագ, նաև նախանձ, նաև վրեժխնդրություն. ամեն բանով ցույց տվեցիք ձեր անձերը, որ անմեղ եք այդ բանում» (Բ Կորնթացիների 7.10,11):

Պողոսը հստակ մատնացույց է անում, որ աստվածային տրտմությունը փոփոխություն է բերում մարդու բնության մեջ՝ փոփոխություն, որը նշանավորվում է ջանքով, անձը մաքրելով, զայրույթով, ակնածալից երկյուղով, փափագով, եռանդով և վրեժխնդրությամբ: Ուստի մենք տեսնում ենք, որ հանդիմանությունը աստվածային տրտմություն է բերում, և եթե դրա հետ ճիշտ են վարվում, ապա արդյունքը լինում է անկեղծ ապաշխարությունը, որն էլ փրկության դարպասն է:

Եթե Հիսուսը, Հովհաննես Մկրտիչը և աշակերտները պատմում էին Բարի լուրը՝ մարդկանց ապաշխարության կոչ անելով, ապա մենք էլ պետք է նույնն անենք:

//////////////////////////////////

Ապաշխարությունը ոչ թե պարզապես մեղքից հեռանալու, այլ Աստծուն դառնալու ընտրություն է: Սրա համար դուք պետք է հանձնեք ձեր կյանքի իշխանությունը Հիսուսին: Հիսուսին Տեր ընդունելը նշանակում է Նրան դարձնել ձեր կյանքի բացարձակ սեփականատերը: Այն պահից ի վեր, երբ անում եք սա,

Աստված ազատում է ձեզ խավարի թագավորությունից և փոխադրում Իր արքայության լույսի և փառքի մեջ:

Եթե ցանկանում եք Հիսուս Քրիստոսով փրկություն ստանալ, ապա կարող եք աղոթել հետևյալ խոսքերով.

«Աստվա՛ծ, որ երկնքում ես, ես ընդունում եմ, որ մեղավոր եմ և չեմ համապատասխանում Քո արդարության չափանիշներին: Ես արժանի եմ հավիտյան դատապարտվելու իմ մեղքի համար: Շնորհակա՛լ եմ, որ ինձ չթողեցիր այդ վիճակում, քանի որ հավատում եմ, որ Հիսուս Քրիստոսին՝ կույս Մարիամից ծնված Քո միածին Որդուն, ուղարկեցիր, որ մահանար ինձ համար և կրեր իմ դատաստանը Խաչի վրա: Հավատում եմ, որ Նա երրորդ օրը հարություն առավ և հիմա նստած է Քո աջ կողմում որպես իմ Տեր և Փրկիչ: Այսպիսով՝ այսօր ես ապաշխարում եմ, որ Քեզնից անկախ եմ ապրել, և իմ կյանքը լիովին հանձնում եմ Հիսուսի իշխանությանը:

Հիսո՛ւս, ես դավանում եմ Քեզ որպես իմ Տեր և Փրկիչ: Քո Հոգով ե՛կ իմ կյանք և դարձրո՛ւ ինձ Աստծո զավակ: Ես հրաժարվում եմ խավարի գործերից, որոնցից նախկինում կառչած էի, և այսօրվանից ապրելու եմ Քո շնորհքով, ոչ թե ինքս ինձ համար. ես ապրելու եմ Քե՛զ համար:

Շնորհակալություն, Տե՛ր: Հիմա իմ կյանքը լիովին Քո ձեռքերի մեջ է, և Քո Խոսքի համաձայն՝ ես երբեք չեմ ամաչի: Հիսուսի անունով: Ամե՛ն»:

Շնորհավորո՛ւմ եմ: Բարի գալո՛ւստ Աստծո ընտանիք: Քաջալերում եմ ձեզ, որ այս ոգևորիչ լուրը հայտնեք մեկ այլ հավատացյալի: Կարևոր է նաև, որ միանաք Աստվածաշնչին հավատացող տեղական եկեղեցու և ընկերակցեք հավատացյալների հետ, որոնք կարող են քաջալերել ձեզ նոր հավատքի մեջ:

Հենց այս պահից դուք սկսեցիք ամենանշանակալի ճամփորդությունը: Ամեն օր աճե՛ք հայտնության, շնորհքի և Աստծո հետ ընկերակցության մեջ:

ՔՆՆԱՐԿՄԱՆ ՀԱՐՑԵՐ

1. Ինչո՞ւ է ապաշխարությունն անհրաժեշտ:
2. Ինչն է սկիզբ դնում ապաշխարությանը, և ինչպիսի՞ն պետք է լինի մեր արձագանքը:
3. Ինչ է տեղի ունենում աստվածային տրտմության արդյունքում:
4. Ապաշխարելիս ինչի՞ց եք շրջվում և դեպի ինչն եք շրջվում:

ԳԼՈՒԽ 3

Հավատք Աստծո հանդեպ

«Ուստի, Քրիստոսի մասին սկզբնական խոսքը թողնելով, դեպի կատարյալը գանք՝ առանց կրկին հիմք դնելու... Աստծուն հավատալու համար» (Եբրայեցիների 6.1):

Ավետարանը Բարի լուրն է այն մասին, թե ինչպես Աստված Հիսուս Քրիստոսի միջոցով փրկագնեց և հաշտեցրեց մարդկությանն Իր հետ: Այդ իսկ պատճառով Պողոսը Ավետարանի մասին ասում է.

> «Ես չեմ ամաչում Քրիստոսի Բարի լուրից: Այն Աստծո գործող զորությունն է, որը փրկում է ամեն հավատացողի. նախ՝ հրեային և ապա՝ հեթանոսին: Այս Բարի լուրը հայտնում է մեզ, թե ինչպես է Աստված Իր աչքերում արդար դարձնում մեզ: Այս ամենը սկզբից մինչև վերջ կատարվում է հավատքի միջոցով: Ինչպես Սուրբ Գիրքն է ասում. «Հավատքի միջոցով է, որ արդարը կյանք ունի»» (Հռոմեացիների 1.16,17, NLT):

Ավետարանը բացահայտում է մեղքերից և դրանց հետևանքներից փրկվելու ճանապարհը: Հիսուսի կատարածի մասին Բարի լուրին հավատալը մեր կյանքերում ազատ է արձակում Աստծո փրկարար զորությունը: Ավետարանի իրական ուղերձը, ինչպես նշված է Աստվածաշնչում, բաղկացած է հստակ փաստերից: Պողոսը հրաշալի ձևով ամփոփում է Ավետարանի հիմնարար փաստերը:

> «Իմացնում եմ ձեզ, եղբայրնե՛ր, այն Ավետարանը, որ ավետարանեցի ձեզ, որն էլ ընդունեցիք, որի մեջ էլ կանգնած եք, որով փրկվում էլ եք, այն բանով, որ

ձեզ ավետարանեցի, եթե ամուր բռնեք այն, եթե զուր տեղը չեք հավատացել: Որովհետև ես առաջուց այն տվեցի ձեզ, որ ես էլ ընդունեցի, թե Քրիստոսը մեր մեղքերի համար մեռավ՝ գրքերի համեմատ: Եվ թե թաղվեց և թե երրորդ օրը հարություն առավ՝ գրքերի համեմատ» (Ա Կորնթացիների 15.1-4):

Ավետարանի հիմնական փաստերն են.

1. Հիսուս Քրիստոսը մահացել է մեր մեղքերի համար (քավություն):
2. Հիսուս Քրիստոսը մեռելներից հարություն է առել երրորդ օրը (հարություն):
3. Եթե մենք հավատանք Հիսուսի մահվանն ու հարությանը, ապա արդարացած կլինենք Աստծո առջև և կերպարանակից կլինենք Նրան (արդարություն):

Փրկությունը հաստատված է Հիսուսի մահվամբ և հարությամբ: Չկա մի բան, որով ինքներս կարող ենք փրկել և արդարացնել մեզ Աստծո առջև՝ բացի Հիսուսի փրկագնող գործին հավատալուց, որի միջոցով Նա հաշտեցրեց մեզ Հոր հետ:

Ահա թե ինչ է ասել Պողոսը Հիսուսի կատարած գործի մասին.

«Որովհետև Աստված Նրան, որ մեղք չգիտեր, մեզ համար մեղք արեց, որ մենք Աստծո արդարությունը լինենք Նրանում» (Բ Կորնթացիների 5.21):

«Մենք արդարանում ենք Աստծո առջև՝ Հիսուս Քրիստոսին հավատալով: Եվ սա ճշմարիտ է ցանկացած հավատացողի համար, ով էլ լինենք: Քանի որ բոլորն են մեղանչել և Աստծո փառքից պակասել: Եվ սակայն Աստված Իր շնորհքով մեզ անվարձահատույց արդարացրեց Իր աչքերում: Նա արեց դա Հիսուս Քրիստոսի միջոցով՝ ազատելով մեզ մեր մեղքերի պատժից: Մենք Աստծո առջև արդարանում ենք, երբ հավատում ենք Հիսուսին, Ով Իր կյանքը զոհաբերեց, որպեսզի մենք կյանք ունենանք» (Հռոմեացիների 3.22-25, NLT):

Աստված փրկել է ձեզ Իր շնորհքով, երբ հավատացել եք: Դուք չեք արժանացել դրան. դա նվեր է Աստծուց:

> «Փրկությունը վարձատրություն չէ այն բարի գործերի համար, որ արել ենք, որպեսզի ոչ ոք չկարողանա պարծենալ» (Եփեսացիների 2.8,9, NLT):

Հաստատելով ամենը, ինչ Պողոսն ասել է՝ Հովհաննեսը գրում է.

> «Աստված այնպես սիրեց աշխարհը, որ Իր միածին Որդուն տվեց, որպեսզի բոլոր Նրան հավատացողները չմահանան, այլ հավիտենական կյանք ունենան» (Հովհաննես 3.16, NLT):

Հավատքը մեր անձնական պատասխանն է Ավետարանին: Այն ոչ միայն նշանակում է մտքով ընդունել Հիսուսի կատարածը մեզ համար, այլև սրտով հավատալ: Երբ լսում ենք Ավետարանը, պետք է հավատքով ընդունենք այն. «Ուստի չենք դադարում Աստծուն շնորհակալություն հայտնելուց, որ երբ Նրա ուղերձը մեզնից լսեցիք, չընդունեցիք այն պարզապես որպես մարդկային գաղափար, այլ այն, ինչ ասացինք, ընդունեցիք որպես Աստծո Խոսք, ինչն այդպես է: Եվ այս Խոսքը շարունակում է գործել ձեզանում, որ հավատում եք» (Ա Թեսաղոնիկեցիների 2.13, NLT): Հավատքն ակտիվացնում է Աստծո Խոսքը, ինչն էլ սկիզբ է դնում վերստին ծնունդին:

Պողոսը բացատրում է, որ փրկությունը գալիս է, երբ ի սրտե հավատում ենք Ավետարանի ճշմարտությանը և շուրթերով դավանում այն. «Եթե բացեիբաց դավանեք, որ Հիսուսն է Տերը, և ձեր սրտում հավատաք, որ Նա մեռելներից հարություն է առել, կփրկվեք: Քանի որ սրտով հավատալով՝ արդարանում եք Աստծո առջև, և բացեիբաց դավանելով ձեր հավատքը՝ փրկվում եք» (Հռոմեացիների 10.9,10, NLT):

Քրիստոսի հանդեպ հավատքն ապարդյուն չէ: Հավատքի միջոցով հավիտենական փոխակերպում է տեղի ունենում: Մենք դառնում ենք.

Նոր արարած. «Ուրեմն, եթե մեկը Քրիստոսում է, նոր

ստեղծված է. հներն անցան, ահա ամեն բան նոր եղավ» (Բ Կորնթացիների 5.17): «Նա, ով Աստծուց է ծնված [գիտակցաբար, միտումնավոր և շարունակաբար], մեղք չի գործում, որովհետև Աստծո բնությունը նրանում է [Աստծո կյանքի սկզբունքը, աստվածային սերմը մշտապես մնում է նրանում], և չի կարող մեղանչել, որովհետև Աստծուց է ծնված: Հայտնի է, որ Աստծո որդիներ են նրանք, ովքեր ունեն Աստծո բնությունը, և սատանայի որդիներ են նրանք, ովքեր ունեն սատանայի բնությունը: Նա, ով արդարություն չի անում [ով չի համապատասխանում Աստծուն՝ նպատակով, մտքով և գործով], Աստծուց չէ, և ոչ էլ նա, որ իր եղբորը (Քրիստոսում իր հավատակցին) չի սիրում» (տե՛ս Ա Հովհաննես 3.9,10, AMPC): «Ապա ձեզ վրա մաքուր ջուր պիտի ցողեմ, և դուք մաքուր կլինեք: Ձեր աղտը կմաքրվի, և այլևս կուռքերի չեք պաշտի: Եվ Ես ձեզ նոր սիրտ կտամ և ձեր ներսում նոր հոգի կդնեմ: Կվերցնեմ ձեր քարե, համառ սրտերը և ձեզ փափուկ ու արձագանքող սիրտ կտամ: Իմ Հոգին կդնեմ ձեզանում, որպեսզի հետևեք Իմ օրենքներին և Իմ դատաստանները պահեք ու կատարեք» (Եզեկիել 36.25-27, NLT):

Իմաստուն, արդար, սրբացած, փրկագնված, կնքված և Սուրբ Հոգով բնակեցված. «Որ նրանում և դուք հուսացիք, երբ որ ճշմարտության խոսքը լսեցիք՝ ձեր փրկության Ավետարանը, որին էլ երբ որ հավատացիք, խոստմունքի Սուրբ Հոգով կնքվեցիք: Որ մեր ժառանգության գրավն է, մինչև ստացվածքի փրկությունը, Նրա փառաց գովասանքի համար» (Եփեսացիների 1.13,14): «Եվ դուք նրանից եք Հիսուս Քրիստոսում, որ Աստծուց մեզ համար եղավ իմաստություն և արդարություն և սրբություն և փրկություն» (Ա Կորնթացիների 1.30):

////////////////////////////////////

«Բայց առանց հավատքի անկարելի է հաճո լինել, որովհետև Աստծուն մոտեցողը պետք է հավատա, թե Նա կա և թե Իրեն խնդրողներին վարձահատույց կլինի» (Եբրայեցիների 11.6):

Հավատքը ներքին համոզմունք է, որ Աստված կա, և հնարավոր է անձնական փորձառությամբ ճանաչել Նրան: Դա ժամանակավորի և հավիտենականի հպման կետն է:

Աստծո գերիշխանությունից բացի՝ դուք կապ եք հաստատում ձեր Արարչի հետ, ստանում եք փրկություն և ուխտի միջոցով տրվող արդարությունը հավատքով: Հավատքը սկզբից մինչև վերջ հասանելի է դարձնում այն ամենը, ինչ Հիսուս Քրիստոսն արել է մեզ համար: Սրանում ներառված է Աստծո շնորհքը, որը կարողություն է տալիս մեզ կառուցելու մեր կյանքերը ոչ թե մեր , այլ Նրա զորությամբ և իմաստությամբ:

Ուստի ուսումնասիրելուց հետո այն, ինչ Սուրբ Գիրքն է ասում ապաշխարության և հավատքի մասին, կարող ենք եզրակացնել, որ առանց ապաշխարության և հավատքի մենք չենք կարող հաշտվել Աստծո հետ: Պողոսը քաջալերում է մեզ «շարունակել առաջանալ հավատքի մեջ՝ հաստատված այն ամուր հիմքի վրա, որի վրա աճում ենք, երբեք չշեղվել Ավետարանի հույսից, որին հավատացել ենք: Սա է այն փառավոր լուրը, որը քարոզում եմ ամբողջ աշխարհում» (Կողոսացիների 1.23, TPT):

Երբ հասունանում ենք հավատքի մեջ՝ աճելով Ավետարանի հիմքի վրա, մեր կենսակերպը հաճեցնում է Աստծուն, քանի որ առանց հավատքի անհնար է հաճեցնել Նրան:

//////////////////////////////////

ՔՆՆԱՐԿՄԱՆ ՀԱՐՑԵՐ

1. Որո՞նք են Ավետարանի հիմնական փաստերը, և ի՞նչ է նշանակում հավատալ Ավետարանին:
2. Ըստ Հռոմեացիների 10.9,10-րդ խոսքերի՝ որտեղի՞ց է փրկությունը:
3. Ի՞նչ նշանակալի փոփոխություններ է ակտիվացնում հավատքը մեր ներսում:

ԳԼՈՒԽ 4

Մկրտություններ

«Ուստի, Քրիստոսի մասին սկզբնական խոսքը թողնելով, դեպի կատարյալը գանք՝ առանց կրկին հիմք դնելու մեռած գործերից ապաշխարության և Աստծուն հավատալու համար և մկրտությունների ուսմունքի և ձեռք դնելու և մեռելների հարության և հավիտենական դատաստանի համար» (Եբրայեցիների 6.1,2):

Նախորդ գլխում ուսումնասիրեցինք, թե ինչպես է հավատքը մեզ համար հասանելի դարձնում այն ամենը, ինչը փրկությամբ տրված է, այդ թվում՝ Աստծո ընտանիքին պատկանելու և Նրա Արքայության անդամ լինելու արտոնությունը: Հաջորդ հիմնարար ուսմունքը, որը քննարկելու ենք, մկրտությունների գաղափարն է:

Նկատի առեք, որ այստեղ «մկրտություն» բառն օգտագործված է ոչ թե եզակի, այլ հոգնակի թվով: Կա «մկրտությունների ուսմունք» (հոգնակի) և ոչ թե «մկրտության ուսմունք» (եզակի): Հետևաբար կարող ենք եզրակացնել, որ Եբրայեցիների թղթի հեղինակը ակնարկում է մկրտության՝ մեկից ավելի տեսակների մասին:

Մկրտության տարբեր տեսակներն ուսումնասիրելիս կարևոր է մտապահել, որ «մկրտություն» բառը ծագել է հունարեն «baptizo» բառից, որ նշանակում է «ընկղմվել, սուզվել, համակվել, ողողվել»: Մկրտության մասնակցելը թե՛ *ամբողջական* և թե՛ *անցումային* փորձառություն է: Ամբողջական է այն իմաստով, որ մարդուն ներառում է ամբողջապես, և *անցումային* է այն իմաստով, որ նշանավորում է անցումը մի վայրից կամ փուլից դեպի մյուսը:

Նոր կտակարանում հիշատակված են մկրտության հինգ տարբեր տեսակներ.

Հովհաննես Մկրտչի մկրտություն: Սա ապաշխա-

րության մկրտությունն է. «Հովհաննեսն անապատում մկրտում էր և ապաշխարության մկրտություն քարոզում՝ մեղքերի թողության համար» (Մարկոս 1.4): Սա Նոր ուխտի մկրտության լոկ նախապատկերը չէր, այլ սկիզբը. «Որովհետև բոլոր մարգարեները և օրենքը մինչև Հովհաննեսը մարգարեացան» (Մատթեոս 11.13): Հովհաննես Մկրտչի ուղերձը համարվում է «Աստծո Որդի Հիսուս Քրիստոսի Ավետարանի սկիզբը» (Մարկոս 1.1):

Ապաշխարությունը մարդու ամբողջ էության անցումն է մեղքից դեպի արդարություն, ինքնակառավարումից դեպի ամբողջական հնազանդություն Աստծուն:

Մկրտություն Քրիստոսի մարմնի մեջ: Այն պահին, երբ ընդունում եք Հիսուս Քրիստոսին որպես Տեր, դուք մեկ եք դառնում Նրա հետ. մարմինը և գլուխը մեկ են. «Որովհետև մենք էլ՝ ամենքս, մեկ Հոգով մկրտվեցինք՝ մեկ մարմին լինելու. թե՛ հրեաներ, թե՛ հույներ, թե՛ ծառաներ, թե՛ ազատներ, և ամենքս մեկ Հոգուց խմեցինք... Արդ, դուք Քրիստոսի մարմինն եք և մեկ-մեկ Նրա անդամները» (Ա Կորնթացիների 12.13,27):

Հետևաբար Քրիստոսի մարմնի մեջ մկրտութունը ամբողջական անցում է խավարի թագավորությունից և ընկղմում լույսի թագավորության մեջ. «Քանի որ Նա փրկել է մեզ խավարի թագավորությունից և փոխադրել Իր սիրելի Որդու Թագավորություն, Ով գնել է մեր ազատությունը և ներել մեր մեղքերը» (Կողոսացիների 1.13,14, NLT):

Սա պատկանելիության մկրտություն է, քանի որ այժմ դուք պատկանում եք Աստծո ընտանիքին և օգտվում Նրա ընտանիքի արտոնություններից: Այդ արտոնությունների թվում են.

Որդեգրում Աստծո ընտանիքի մեջ որպես որդիներ և դուստրեր: «Աստված կանխավ որոշել էր որդեգրել մեզ Իր ընտանիքի մեջ՝ Հիսուս Քրիստոսի միջոցով մեզ Իրեն մոտեցնելով: Դա Նրա ցանկությունն էր և մեծ հաճություն Նրա սրտի համար» (Եփեսացիների 1.5, NLT):

Աստծո երկնային արքայության քաղաքացիություն: «Ուրեմն այսուհետև այլևս օտար և պանդուխտ չեք, այլ

սուրբերի հետ քաղաքացիներ և Աստծո ընտանիքներ» (Եփեսացիների 2.19):

Բժշկություն և մատակարարում: Խաչի վրա Հիսուսի կատարած փրկագնող աշխատանքը ներառում է ոչ միայն մեղքերի ներումը, այլև բժշկությունը և մատակարարումը: Եսային մարգարեացել է. «Բայց Նա մեր մեղքերի համար վիրավորվեց և մեր անօրինությունների համար հարվածվեց, մեր խաղաղության պատիժը Նրա վրա եղավ, և Նրա վերքերով մենք բժշկվեցինք» (Եսայի 53.5): Պետրոսը հաստատեց դա. «Նա անձամբ կրեց մեր մեղքերն Իր մարմնում խաչի վրա, որպեսզի մենք մեռնենք մեղքի համար և ապրենք արդարության համար: Նրա վերքերով մենք բժշկված ենք» (տես Ա Պետրոս 2.24, NLT):

Օրհնությունների բոլոր տեսակները: «Օրհնյա՛լ է Աստված և մեր Տեր Հիսուս Քրիստոսի Հայրը, որ մեզ օրհնեց ամեն հոգևոր օրհնությունով երկնավոր բաներում՝ Քրիստոսով» (Եփեսացիների 1.3):

Հավիտենական ժառանգություն: «Ավելին՝ միացած լինելով Քրիստոսին՝ մենք ժառանգություն ունենք Աստծուց, քանի որ Նա մեզ կանխավ ընտրել է և ամեն բան ծառայեցնում է Իր ծրագրին» (Եփեսացիների 1.11, NLT):

Ջրի մկրտություն: Քրիստոսում մկրտվելը հավատացյալներն ի սկզբանե նույնացնում են Հիսուսի մահվան ու հարության հետ: Երբ հավատացյալը ջրով մկրտվում է, դրանով հրապարակայնորեն հռչակում է իր սրտի ներքին վերափոխման մասին, որը նախ և առաջ տեղի էր ունեցել ապաշխարությամբ և Հիսուս Քրիստոսի քավչարար գործին հավատալով: Ջրի մկրտությունը փաստում է այն մասին, որ մենք ոչ միայն շրջվում ենք մեղքից, այլև մեռնում ենք դրա համար: Մենք հռչակում ենք, որ մեր հին կյանքը և մեղավոր բնությունը այժմ մեռած են: Հռչակում ենք նաև, որ հարություն ենք առել Քրիստոսի մեջ ունեցած նոր կյանքի համար: Մկրտության ջրի մեջ ընկղմվելը խորհրդանշում է Քրիստոսի հետ խաչվելն ու թաղվելը: Ջրից

դուրս գալը խորհրդանշում է Քրիստոսի հետ հարություն առնելը: Հետևաբար ջրի մկրտությունը ներկայացնում է Հիսուսի մահվան և հարության զորությունը: Մկրտության կարևորության մասին Պողոսը գրել է.

> «Թե՞ մոռացել եք, որ մկրտությամբ Քրիստոսին միանալով՝ միացանք Նրա մահվանը: Քանի որ մկրտությամբ մեռանք և թաղվեցինք Քրիստոսի հետ: Եվ ինչպես Քրիստոսը Հոր փառավոր զորությամբ հարություն առավ մեռելներից, այժմ մենք ևս կարող ենք նոր կյանք ապրել» (Հռոմեացիների 6.3,4, NLT):

> «Երբ դարձաք Քրիստոսին, «թլփատվեցիք», սակայն ոչ ֆիզիկական գործողությամբ: Քրիստոսը հոգևոր թլփատում արեց՝ կտրելով ձեր մեղավոր բնությունը, քանի որ երբ մկրտվեցիք, Քրիստոսի հետ թաղվեցիք: Ինչպես նաև Նրա հետ հարություն առաք դեպի նոր կյանք, քանի որ վստահեցիք Աստծո կարող զորությանը, որ Քրիստոսին մեռելներից հարություն տվեց» (Կողոսացիների 2.11,12, NLT):

> «Որի օրինակը, այսինքն՝ մկրտությունը, մեզ էլ հիմա ապրեցնում է [ներքին հարցերից և վախերից]՝ ոչ թե մարմնի աղտը դեն գցելով [լվանալով], այլ բարի խղճմտանքի [ներքին մաքրության և խաղաղության] վկայությունն առ Աստված [ձեզ տալով] [քանի որ դուք ցույց եք տալիս, թե ինչին եք հավատում]՝ Հիսուս Քրիստոսի հարությամբ» (Ա Պետրոս 3.21, AMP):

Ջրի մկրտությունը մեր առաջին հնարավորությունն է Հիսուսին պատվելու և հնազանդվելու՝ Նրանը դառնալուց հետո: Սակայն կան պայմաններ, որոնք պետք է բավարարվեն, մինչև մարդը կկարողանա մասնակցել ջրի մկրտությանը: Այդ պայմանները ներառում են հետևյալ գործողությունները.

Ապաշխարություն: Պենտեկոստեի օրը Պետրոսը համարձակությամբ հայտարարեց. «Եվ երբ որ այս լսեցին, իրենց սրտերում զղջացին և ասացին Պետրոսին

ու մյուս առաքյալներին. «Ի՞նչ անենք, մարդի՛կ եղբայրներ»: Պետրոսն էլ նրանց ասաց. «Ապաշխարե՛ք, և ձեզնից ամեն մեկը թող մկրտվի Հիսուս Քրիստոսի անունով՝ մեղքերի թողության համար, և Սուրբ Հոգու պարգևը կընդունեք»» (Գործք 2.37,38): Մկրտությանը պետք է նախորդի ապաշխարությունը, քանի որ դա է առաջին արձագանքը, որն Աստված ակնկալում է նրանցից, ովքեր ցանկանում են փրկվել:

Հավատք: Ինչպես տեսանք նախորդ գլխում, Ավետարանին հավատալն անհրաժեշտ է, որպեսզի դրա փրկարար զորությունը սկսի գործել: Հիսուսն ասել է. «...Գնացե՛ք ամբողջ աշխարհը, Ավետարանը քարոզե՛ք ամեն արարածի: Ով հավատաց և մկրտվեց, կփրկվի, և ով չհավատաց, կդատապարտվի» (Մարկոս 16.15,16): Ամենուր, որտեղ քարոզվել է Ավետարանը, նրանք, ովքեր ցանկանում են փրկվել, պետք է ապաշխարեն, հավատան և մկրտվեն:

Որոշում: Հավատացյալն ինքը պետք է մկրտվելու որոշում կայացնի: Ուրիշները չեն կարող նրա փոխարեն այդ որոշումը կայացնել: Ապաշխարելու և հավատալու պայմանները բավարարելը ցույց է տալիս, որ մարդը գիտակցում է, թե ինչին է նվիրվում: Սա անելով՝ մարդը բացեիբաց հռչակում է, որ մեռած է հին կյանքի համար, և հրապարակավ հայտարարում է, որ կյանքը հանձնել է Հիսուսին ու ցանկանում է ապրել Նրա շնորհքով:

Ուստի ջրի մկրտությունը ամբողջական ընկղմվելն է Քրիստոսի մեջ՝ հին կենսակերպի մահվան հրապարակային հայտարարություն և նվիրում Աստծո կենսակերպին. «Իմ հին մարդը խաչվել է Քրիստոսի հետ: Այլևս ես չեմ ապրում, այլ Քրիստոսն է ապրում ինձանում: Ուստի ես ապրում եմ այս հողեղեն մարմնում՝ վստահելով Աստծո Որդուն, Ով սիրեց ինձ և Իր անձը դրեց ինձ համար» (Գաղատացիների 2.20, NLT):

Մկրտություն Սուրբ Հոգով: Սա այլ փորձառություն է, քան ջրի մկրտությունն է: Այս պարագայում հավատացյալը լցվում է Սուրբ Հոգով, Ով նրան կարողություն է տալիս արդյունավետ կերպով ներկայացնելու Հիսու-

սին: Սուրբ Հոգով մկրտությունը առաջարկ կամ այլընտրանք չէ, այլ պատվիրան:
Հիսուսը հստակ հրահանգել է.

> «Եվ նրանց միասին ժողովված ժամանակ պատվեր էր տալիս Երուսաղեմից չհեռանալ, այլ սպասել Հոր ավետիքին, որ ասաց. «Ինձնի՛ց լսեցիք»: Որովհետև Հովհաննեսը հիրավի ջրով մկրտեց, բայց դուք Սուրբ Հոգով կմկրտվեք, ոչ թե շատ օրեր սրանից հետո» (Գործք 1.4,5):

Հիսուսը հայտնել է նաև այս մկրտության նպատակը.

> «Եվ ահա Ես Իմ Հոր խոստմունքը կուղարկեմ ձեզ վրա. դուք էլ նստեք Երուսաղեմ քաղաքում, մինչև վերևից զորություն հագնեք» (Ղուկաս 24.49):

> «Բայց դուք զորություն կառնեք, երբ որ Հոգին ձեզ վրա կգա, և Իմ վկաները կլինեք Երուսաղեմում և ամբողջ Հրեաստանի և Սամարիայի մեջ՝ մինչև երկրի ծայրերը» (Գործք 1.8):

Սուրբ Հոգու մկրտությամբ զորություն ենք ստանում՝ ապրելու այն նոր կյանքը, որը Հիսուսը հասանելի է դարձրել մեզ: Աստծո այս զորությամբ օժտված՝ մենք ազատվում ենք մեղքի զորությունից և զինվում Սուրբ Հոգու գերբնական պարգևներով (տե՛ս Ա Կորնթացիների 12-րդ գլուխ): Աստված ցանկանում է, որ բոլոր հավատացյալները լցված լինեն Իր Հոգով: Պետրոսը գրել է. «Որովհետև ձեզ և ձեր որդիների համար է այս խոստմունքը և այն բոլոր հեռավորների համար, որոնց մեր Տեր Աստվածը կկանչի» (Գործք 2.39):

//////////////////////////////////

Հիսուս Քրիստոսին որպես Փրկչի ճանաչեցի 1979 թվականին Փուրդյու համալսարանից մի եղբոր միջոցով: Երբ շրջվեցի իմ ճանապարհներից և Հիսուս Քրիստոսին դավանեցի որպես իմ Տեր, գիտեի, որ ծնվել եմ Աստծո

արքայության մեջ: Անկասկած փրկված էի: Այդուհանդերձ, իմ կյանքում ինչ-որ բան պակասում էր, և մի քանի ամիս շարունակ չէի հասկանում, թե ինչն էր դա: Թվում էր, թե Տերը հեռու էր, չնայած որ Իր զավակն էի: Երբ Աստվածաշունչ էի կարդում, դժվարանում էի հասկանալ այն. նույնիսկ ջանասիրաբար կարդալը չէր օգնում, քանի որ հասկացողությունս սահմանափակ էր: Բացի այդ՝ չէի կարողանում գայթակղության դեմ հաղթանակած կյանքով ապրել, հատկապես հասակակիցներիս ճնշման պարագայում, երբ համալսարանի ուսանող էի:

Ժամանակի ընթացքում հանդիպեցի մարդկանց, որոնք կարծես ավելի մտերիմ էին Տիրոջ հետ, քան ես: Նրանք Աստծո մասին խոսում էին որպես իրենց անձնական Աստծո: Շփոթված էի: Նրանք կարծես ունեին զորություն և Աստծո ճանապարհները զանազանելու տեսողություն, որը ես չունեի: *Ո՞րն էր կապի բացակայության պատճառը*. փորձում էի հասկանալ: Այնուհետև՝ Աստվածաշունչս ուսումնասիրելիս, հասկացա, որ կար Աստծո հետ հանդիպման մի տեսակ, որը չէի վերապրել. դա մկրտությունն էր Սուրբ Հոգով: Այս փորձառությունը շրջադարձային էր Աստծո հետ իմ ընթացքի մեջ:

Սուրբ Հոգով մկրտությունը հնարավոր չէ վաստակել կամ գնել. այն պետք է ընդունել: Սուրբ Գիրքը բացահայտում է երեք պարզ քայլ, որոնց միջոցով ընդունում ենք այս մկրտությունը.

Ցանկություն: Հիսուսը հայտնում է, որ Աստծո հանդեպ մեր ծարավի և քաղցի աստիճանն է որոշում, թե որքան կլցվենք Նրանով. «Երանի՛ նրանց, որ սոված և ծարավ են արդարության, որ նրանք կկշտանան» (Մատթեոս 5.6):

Խնդրվածք: «Արդ, եթե դուք, որ չար եք, գիտեք բարի պարգևներ տալ ձեր որդիներին, որքա՛ն ավելի երկնավոր Հայրը Սուրբ Հոգին կտա նրանց, որ ուզում են Նրանից» (Ղուկաս 11.13):

Հավատք: Պողոսը Գաղատիայի եկեղեցուն հիշեցնում է. «Այս միայն կամենում եմ սովորել ձեզնից. օրեն-

քի գործերից ընդունեցիք Հոգին, թե՞ հավատքի լսելուց» Գաղատացիների 3.2):

Սուրբ Հոգով մկրտությունը Նրանով առատությամբ լցվելու փորձառությունն է, երբ Հոգին ողողում ու համակում է ձեզ այնքան, որ կլանվեք Աստծով. «Որ [իսկապես] [անձնական փորձառությամբ] ճանաչեք Քրիստոսի սերը, որը [առանց փորձառության] ամեն գիտությունից գերազանց է. որ [ձեր ամբողջ էությամբ] լցվեք Աստծո ամեն լիությունով [ունենաք աստվածային առատ ներկայությունը և ամբողջապես լցվեք ու ողողվեք հենց Աստծով]» (Եփեսացիների 3.19, AMPC): Խնդրում եմ, հասկացե՛ք, որ Սուրբ Հոգով լցվելը մեկանգամյա իրադարձություն չէ, այլ շարունակական փորձառություն: Պողոսը քաջալերում է. «Եվ մի՛ արբեք գինով, որ նրանում անառակություն կա, այլ լցվե՛ք [Սուրբ] Հոգով» (Եփեսացիների 5.18, AMPC): Սուրբ Հոգին կենտրոնական տեղ է զբաղեցնում մեր քրիստոնեական փորձառության մեջ:

ԿՐԱԿԻ ՄԿՐՏՈՒԹՅՈՒՆ

Այս մկրտությունն անմիջականորեն կապված է Սուրբ Հոգով մկրտվելու հետ: Հովհաննես Մկրտիչը Հիսուսի մասին ասել է. «Ես ձեզ ջրով եմ մկրտում, բայց շուտով գալու է Մեկը, Ով ինձնից մեծ է՝ այնքան մեծ, որ ես նույնիսկ Նրա ծառան լինելուն և Նրա կոշիկի կապերն արձակելուն արժանի չեմ: Նա կմկրտի ձեզ Սուրբ Հոգով և կրակով» (Ղուկաս 3.16, NLT):

Կրակի մկրտությունը ներկայացնում է սրբագործումը: Երբ լցվում եք Սուրբ Հոգով, Նա սրբագործման աշխատանք է կատարում ձեր մեջ, ինչի շնորհիվ դուք հղկվում և հասունանում եք: Կրակի մկրտությունը տառապանքի տարր ունի: Թո՛ւյլ տվեք հստակեցնել, որ Աստված չէ տառապանքի հեղինակը, սակայն Նա օգտագործում է տառապանքը՝ մեր հավատքը զորացնելու և Իր բարության ու հավատարմության մասին մեր հասկացողությունը

հասունացնելու համար (տե՛ս Հակոբոսի 1-ին գլուխ):

Պետրոս առաքյալը գրել է.

> «Ուստի ուրա՛խ եղեք: Ձեզ մեծ ուրախություն է սպասում, նույնիսկ եթե ստիպված լինեք մի փոքր ժամանակ փորձություններով անցնել: Այդ փորձությունները կբացահայտեն՝ արդյո՛ք ձեր հավատքն անկեղծ է: Այն փորձվում է այնպես, ինչպես ոսկին է փորձվում և մաքրվում կրակով: Ուստի, եթե ձեր հավատքն ուժեղ մնա շատ փորձություններով անցնելիս, այն փառք, գովություն և պատիվ կբերի ձեզ այն օրը, երբ Հիսուս Քրիստոսը կհայտնվի ամբողջ աշխարհին» (Ա Պետրոս 1.6,7, NLT):

> «Սիրելինե՛ր, օտար բան մի՛ համարեք այն բորբոքված նեղությունը, որ ձեզ փորձելու համար լինում է, իբր թե մի օտար բան է պատահում ձեզ: Այլ ուրա՛խ եղեք՝ իբրև թե Քրիստոսի չարչարանքին մասնակից եղածներ, որ Նրա փառքի հայտնության ժամանակում էլ ցնծալով ուրախանաք» (Ա Պետրոս 4.12,13):

Կրակի մկրտությունը կոչում են նաև «Տառապանքի մկրտություն»: Սա յուրահատուկ մկրտություն է, որը ձեզ ընկղմում է հղկման ժամանակահատվածի մեջ՝ պատրաստելու նպատակով: Ձեր կյանքում Աստծո ծրագրի իրագործման համար անխուսափելի է ձեր ամբողջ էության՝ հոգու, շնչի և մարմնի ամբողջական հանձնումը Աստծո ձեռքերի մեջ:

Տառապանքի մկրտության մասին գրված է Մարկոսի 10.38-ում: Հիսուսին մոտենում են աշակերտներից երկուսը՝ Հակոբոսը և Հովհաննեսը, ու Նրանից արտոնություն խնդրում՝ նստելու Նրա գահի պատվավոր աջ և ձախ կողմերում:

Ի պատասխան՝ Հիսուսն ասում է. «Չգիտեք, թե ինչ եք խնդրում. կարո՞ղ եք խմել այն դառը տառապանքի բաժակը, որ Ես պիտի խմեմ, կամ մկրտվել *տառապանքի այն մկրտությունով,* որով Ես պիտի մկրտվեմ»:

«Օ՛, այո՛,- պատասխանում են երկու աշակերտները,- կարո՛ղ ենք»:

Այնուհետև Հիսուսն ասում է. «Եվ իսկապես կխմեք Իմ դառը բաժակից ու կմկրտվեք տառապանքի Իմ մկրտությունով: Սակայն Ես չեմ կարող ասել, թե ով է նստելու Իմ աջ կամ ձախ կողմում: Աստված այդ տեղերը պատրաստել է նրանց համար, ում ընտրել է» (Մարկոս 10.39, NLT):

Ցավոք, շատերը չեն հասկանում, թե որն է փորձությունների և տառապանքի նպատակը: Մեզ սովորեցնելու համար Պողոսը գրել է. «Եվ ձեզ Աստծուց այդ շնորհքը եղավ Քրիստոսի համար՝ ոչ միայն հավատալ Նրան, այլ Նրա համար չարչարվել էլ» (Փիլիպեցիների 1.29):

Պնդումն այն մասին, որ ձեզ տառապելու շնորհ է ընծայված, գուցե փոքր-ինչ մտորումների տեղիք տա: Ինչպե՞ս կարելի է «տառապանք» և «շնորհ» բառերն օգտագործել մեկ նախադասության մեջ: Իսկ գուցե դուք տառապանքի մասին սխալ պատկերացո՞ւմ եք ունեցել:

Ցանկացած փորձության մեջ, որին առերեսվում ենք, Աստված դժվարությունները թույլ է տալիս որոշակի նպատակի համար, այն է՝ մեր ներսում կերտել բնավորություն և զարգացնել կարողություն: Այսօր Աստված թույլ կտա դժվարություն, որը նման կլինի ճնշման այն աստիճանին, որին Նա գիտի, որ առերեսվելու ենք վաղը: Աստված օգտագործում է մեր ներկա դժվարությունները, որպեսզի զորացնի մեզ ապագայում ավելի մեծ հաղթանակների համար: Այդ պատճառով է, որ փորձությունը միշտ ավելի մեծ է թվում, քան պատրաստվածության կամ պատասխանատվության մեր ներկայիս աստիճանը [Խնդրո՛ւմ եմ նկատի առնել, որ ես զգուշությամբ եմ գործածում «թույլ տալ» արտահայտությունը, քանի որ Աստված չէ մեր փորձությունների հեղինակը: Հակոբոսն ասում է. «Փորձվելիս մի՛ ասեք, թե Աստված է ձեզ փորձում. Աստված երբեք չար բաներով չի փորձվում, և Ինքն էլ երբեք չի փորձում որևէ մեկին» (Հակոբոս 1.13, NLT)]:

Յուրաքանչյուր դժվարության կամ տառապանքի մեջ կա խոստում: Հակոբոսն ասում է. «Բոլորովին ու-

րախությո՛ւն համարեք, ընկերնե՛ր, երբ ամեն կողմից պատված լինեք փորձություններով և մարտահրավերներով: Իմացե՛ք, որ ճնշման տակ երևան է գալիս ձեր հավատքի կյանքը և ցույց տալիս իրական գույները: Ուստի մի՛ փորձեք ժամանակից շուտ դուրս գալ այդտեղից: Թո՛ւյլ տվեք, որ դա իր գործն անի, որ հասունանաք և զարգանաք ու որևէ բանի պակասություն չունենաք» (Հակոբոս 1.2-4, MSG):

Երբ տառապանքի միջով եք անցնում և շարունակում հնազանդ լինել Աստծուն, դառնում եք ավելի ուժեղ, լավ զարգացած և պատրաստված այն ամենին, ինչ Աստված ծրագրել է ձեզ համար: Հակոբոսը նաև տեղեկացնում է, թե ինչ է մեզ սպասում տառապանքի մյուս կողմում. «Երանելի է այն մարդը, որը համբերում է փորձության. քանի որ, եթե փորձվելով ընտիր գտնվի, կյանքի պսակը կառնի, այն, որ Տերը խոստացավ Իրեն սիրողներին» (Հակոբոս 1.12):

«Պսակ» բառը վկայում է իշխանության մասին, իսկ իշխանության հետ գալիս է զորություն: Հիսուսը տարվեց անապատ, որպեսզի սատանան փորձեր գայթակղել Նրան: Իր հնազանդության և հաստատակամության շնորհիվ Նա ավելի մեծ իշխանությամբ և զորությամբ դուրս եկավ այնտեղից (տե՛ս Ղուկաս 4.1,14): Ինչպես Հիսուսը, մենք ևս կարող ենք ավելի մեծ իշխանությամբ և զորությամբ դուրս գալ տառապանքից:

Իմ հեղինակած «Սատանայի խայծը» գիրքը քսանհինգ տարի շարունակ համարվել է բեսթսելեր: Այն բազում մարդկանց ազատ է արձակել վիրավորվածության մահացու թակարդից: Տարիներ շաունակ իմ թիմը և ես ստացել ենք մեծ թվով վկայություններ այն մասին, թե որքան խոր ազդեցություն է այս ուղերձն ունեցել մարդկանց կյանքերի, ամուսնությունների և եկեղեցիների վրա: Այդուհանդերձ, մինչև որևէ բառ գրելը անցա տառապանքի ժամանակահատվածով, երբ պետք է հաղթահարեի շատ ցավալի դավաճանություն: Այդ ժամանակը տևեց տարիներ, որոնց ընթացքում սովորեցի ազատվել վիրավորանքից և աճել

Աստծուն հնազանդվելու մեջ: Երբ հաջողությամբ դուրս եկա դժվարության այդ ժամանակից, կարող էի համոզվածությամբ, իշխանությամբ և զորությամբ խոսել ու գրել վիրավորանքի մասին: Այդ ուղերձը նախ և առաջ ձևավորվեց իմ մեջ, ապա միայն խոսվեց կամ գրվեց իմ միջոցով: Քանի որ դրանում հաղթանակ տարա, կարողացա նույնն անելու զորություն փոխանցել ուրիշներին:

Թո՛ւյլ տվեք կրկնել. Քրիստոսի այն չարչարանքները, որոնցով մեզ թույլ է տրվում անցնել, նրանք չեն, որոնցից Նա ազատել է մեզ, ինչպես, օրինակ՝ հիվանդությունը, ախտը կամ աղքատությունը: Տառապանքները, որոնցով անցնում ենք, վերաբերում են մեր անձերի, մեղավոր ու մարմնական բնության համար մեռնելուն: Ինչպես Պետրոսն է ասել. «Արդ, Քրիստոս, որ մարմնով մեզ համար չարչարվեց, դուք էլ նույն մտքով զինվորվե՛ք, որ մարմնով չարչարվողը մեղքից դադարեց» (Ա Պետրոս 4.1):

Տառապանքի մկրտության (ընկղմման) նպատակը մեզ պատրաստելն է, որ դուրս գանք նոր մակարդակ, որն անհրաժեշտ է Քրիստոսի մեջ մեր կոչումն իրագործելու համար: Իմ փորձառությունը ցույց է տվել, որ այն կրակը, որը սկզբում մաքրագործում է մեզ, հետո ազատում է նրանց, ում հետ առնչվում ենք:

////////////////////////////////////

Կա մի կենտրոնական թեմա, որը վերաբերում է մկրտության բոլոր տեսակներին, և դա ամբողջական ընկղմումն է: Սա նշանակում է, որ դուք ամբողջապես ներդրվում եք և ոչինչ չեք պահում: Դուք ամբողջապես նվիրվում եք նոր կենսակերպին:

Սա գեղեցիկ փոխանակում է ձեր և Աստծո միջև. Նրա կյանքը՝ ձեր կյանքի փոխարեն:

ՔՆՆԱՐԿՄԱՆ ՀԱՐՑԵՐ

1. Ինչո՞ւ է ջրի մկրտությունը կարևոր: Ինչ է այն ներկայացնում:
2. Ո՞րն է Սուրբ Հոգով մկրտվելու արդյունքը, և ինչո՞ւ է դա կարևոր հավատացյալի կյանքում:
3. Երբ մկրտվում ենք Քրիստոսի մարմնի մեջ, ինչ արտոնություններ ենք ստանում որպես Աստծո ընտանիքի անդամներ:
4. Այժմ, երբ գիտեք, թե որն է Տառապանքի մկրտությունը, ինչո՞ւ է այն կարևոր ձեզ համար:

ԳԼՈՒԽ 5

Ձեռնադրություն

«Ուստի, Քրիստոսի մասին սկզբնական խոսքը թողնելով, դեպի կատարյալը գանք՝ առանց կրկին հիմք դնելու... ձեռք դնելու... համար» (Եբրայեցիների 6.1,2):

«Ձեռք դնելու» ուսմունքը հասկանալու համար նախ պետք է հասկանանք Արքայության սկզբունքը իշխանության վերաբերյալ: Սուրբ Գրքում հստակ գրված է, որ ամեն իշխանություն Աստծուց է, և գոյություն ունեցող իշխանությունները նշանակված են Աստծուց (տե՛ս Հռոմեացիների 13.1): Թո՛ւյլ տվեք այլ կերպ ձևակերպել. երբ հանդիպում եք Աստծուն, հանդիպում եք իշխանության, քանի որ Նա և Իր իշխանությունը անբաժանելի են:

Մատնացո՛ւյց արեք մեկին, ով չի հարգում իշխանությունը, և ես ցույց կտամ ձեզ, որ նա Աստծուն չի ճանաչում: Մատնացո՛ւյց արե՛ք մեկին, ով խոր հարգանք է տածում իշխանության հանդեպ, և ես ցույց կտամ ձեզ, որ նա կա՛մ ճանաչում է Աստծուն, կա՛մ մոտ է Նրան գտնելուն: Սա հակասություն է առաջացնում շատերի մեջ, քանի որ ունեցել են չար, դաժան, կոպիտ և, նույնիսկ, անազնիվ իշխանություններ: Ինչ վերաբերում է այս պնդմանը, ես կասեմ հետևյալը: Կրկին կարդացե՛ք Հռոմեացիների 13.1-ը և ուշադրություն դարձրե՛ք, որ Պողոսը չի գրում, թե իշխանությունն աստվածապաշտ է: Իշխանությունը կարող է լինել Աստծուց, բայց իշխանավորների վարքը՝ ոչ: Այն, թե ինչպես է Աստված գործում լիազորված իշխանավորների միջոցով, չնայած նրանց բազմաթիվ թերություններին, Նրա գերիշխանության ևս մեկ զարմանալի ապացույց է:

Իշխանությունը, ի վերջո, կենսակերպ է Աստծո Արքայությունում: Դրան հնազանդվելով՝ մենք մտնում

ենք աստվածային ծածկոցի և պաշտպանության տակ, իսկ այդ համատեքստում օրհնություն և զորություն են փոխանցվում:

Ես գիտակցում եմ, որ այս հիմնարար ուսմունքը կարող է անորոշ թվալ, սակայն մի փոքր ուսումնասիրությունից հետո կհասկանաք դրա կարևորությունը: Ձեռնադրությունը գործողություն է, որով օրինական իշխանություն ունեցողը ձեռքերը դնում է մեկ ուրիշի վրա՝ հստակ հոգևոր նպատակով: Այս գործողությունն ուղեկցվում է հավատքով և մարգարեական խոսքերով և ունի փոխանցման և նույնացման իմաստ:

Ամբողջ Աստվածաշնչում՝ թե՛ Նոր և թե՛ Հին կտակարաններում, տեսնում ենք ձեռնադրության օրինակներ տարբեր իրավիճակներում: Այս գործողությունն այնքան կարևոր էր մեր հոգևոր հայրերի համար, որ Պողոսը զգուշացնում է, որ չի կարելի անփութությամբ մոտենալ դրան. «Ձեռքը շուտով մի՛ դիր մեկի վրա...» (Ա Տիմոթեոս 5.22):

Սուրբ Գրքում տեսնում ենք ձեռնադրության մի քանի հատուկ նպատակ: Այս գլխում համառոտ կուսումնասիրենք դրանցից յուրաքանչյուրը:

ՕՐՀՆՈՒԹՅԱՆ ՓՈԽԱՆՑՈՒՄ

«Եվ Իսրայելն իր աջ ձեռքը մեկնեց և Եփրեմի գլխին դրեց, որ փոքրն էր, և իր ձախ ձեռքը՝ Մանասեի գլխին. դիտմամբ փոխեց իր ձեռքերը, որովհետև Մանասեն անդրանիկն էր» (Ծննդոց 48.14):

Ձեռնադրության միջոցով օրհնություն է փոխանցվում: «Օրհնություն» բառի բուն իմաստն է՝ ինչ-որ մեկին բարգավաճման կարողություն տալը: Այս կարողությունը կենսականորեն կարևոր է մեր հոգևոր աճի համար: Վերոնշյալ խոսքում Իսրայելը ձեռնադրությամբ օրհնում է Հովսեփի որդիներին՝ Մանասեին և Եփրեմին: Նա մտածված իր աջ ձեռքը դնում է Եփրեմի վրա: Ըստ ավանդության՝ առաջնեկն ավելի մեծ օրհնություն էր ժառանգում: Այդուհանդերձ, Իսրայելը գիտակցաբար ձեռնադրեց, քանի որ առաջնորդվում էր

Սուրբ Հոգով: Սա ցույց է տալիս այն, որ կարևոր է ոչ միայն ձեռնադրությունը, այլև ձեռնադրության կարգը: Օրհնությունը սերնդեսերունդ անցնում և փոխանցվում է հիմնականում ձեռնադրության միջոցով:

ԱՌԱՋՆՈՐԴՆԵՐ ԿԱՐԳԵԼԸ

Մովսեսը Հեսուին կարգեց որպես իր հետնորդի: Հեսուն կարգվեց ձեռնադրության միջոցով վկաների ներկայությամբ: Սա ներառում էր նաև հոգևոր իշխանության փոխանցումը. «Եվ Եհովան ասաց Մովսեսին. «Ա՛ռ քեզ մոտ Նավեի որդի Հեսուին, որի վրա Հոգի կա, և ձեռքդ նրա վրա դի՛ր և նրան Եղիազար քահանայի և ամբողջ ժողովքի առջև կանգնեցրո՛ւ և նրանց աչքի առջև նրան պատվե՛ր տուր և քո փառքից դի՛ր նրա վրա, որպեսզի Իսրայելի որդիների ամբողջ ժողովքը նրան հնազանդություն անի...»: Եվ Մովսեսն արեց այնպես, ինչպես որ Եհովան նրան պատվիրել էր. առավ Հեսուին և նրան կանգնեցրեց Եղիազար քահանայի և ամբողջ ժողովքի առջև: Եվ իր ձեռքը նրա վրա դրեց և նրան պատվեր տվեց, ինչպես որ Եհովան Մովսեսի ձեռքով խոսել էր» (Թվոց 27.18-20,22,23):

Նոր կտակարանում տեսնում ենք, որ վաղ եկեղեցու գործերը վարելու համար առաջնորդներ էին կարգված. դեպքերից մեկում հարցը վերաբերում էր որբևայրիներին ճաշ մատուցելուն: Առաջնորդներին զգուշությամբ ընտրելուց հետո առաքյալները նրանց ձեռնադրեցին, ինչը վերջիններիս կարողություն տվեց ծառայելու Արքայությանը. ««Հիմա, եղբայրնե՛ր, ձեզնից յոթ վկայված մարդիկ ընտրե՛ք՝ Սուրբ Հոգով և իմաստությունով լցված, որոնց այս պիտույքի վրա դնենք...»: Եվ այս խոսքը ամբողջ բազմության առջև հավանելի երևաց: Եվ ընտրեցին Ստեփանոսին, որ Սուրբ Հոգով և հավատքով լցված մարդ էր, և Փիլիպպոսին և Պրոքորոնին և Նիկանովրային և Տիմովնային և Պարմենային և Անտիոքացի նորահավատ Նիկողայոսին: Նրանց կանգնեցրին առաքյալների առջև և աղոթք անելով ձեռք դրին նրանց վրա» (Գործք 6.3,5,6): Առաքյալները

ջանասիրաբար փնտրում էին մարդկանց, որոնք ունեին բարի համբավ և լցված էին Սուրբ Հոգով: Ծառայության թիմերի նոր առաջնորդներին զգուշությամբ ընտրելը և կարգելը կարևոր էին Ավետարանը տարածելու համար:

ՄԿՐՏՈՒԹՅՈՒՆ ՍՈՒՐԲ ՀՈԳՈՎ

Չնայած որ անհատները կարող են Սուրբ Հոգով մկրտվել՝ առանց ձեռնադրության, շատ հաճախ հավատացյալները Հոգով լցվել են ձեռնադրությունից հետո. «Երբ որ Երուսաղեմում լինող առաքյալները լսեցին, թե Սամարիան Աստծո Խոսքը ընդունեց, Պետրոսին և Հովհաննեսին ուղարկեցին նրանց մոտ: Որոնք իջան և աղոթք արեցին նրանց վրա, որ Սուրբ Հոգին առնեն, որովհետև դեռ նրանցից ոչ մեկի վրա չէր իջել. միայն Տեր Հիսուսի անունով մկրտված էին: Այն ժամանակ ձեռքերը դրեցին նրանց վրա, և նրանք ընդունում էին Սուրբ Հոգին» (Գործք 8.14-17):

ՀՈԳԵՎՈՐ ՊԱՐԳԵՎՆԵՐԻ ՓՈԽԱՆՑՈՒՄ

Հին կտակարանում տեսնում ենք, թե ինչպես Մովսեսը ձեռնադրությամբ իմաստություն փոխանցեց Հեսուին. «Եվ Նավեի որդի Հեսուն իմաստության հոգով լիքն էր, որովհետև Մովսեսն իր ձեռքերը նրա վրա էր դրել, և Իսրայելի որդիները նրան լսում էին և անում էին, ինչպես որ Եհովան Մովսեսին պատվիրել էր» (Բ Օրինաց 34.9):

Նոր կտակարանում ևս տեսնում ենք նման օրինակ՝ Պողոսի և Տիմոթեոսի օրինակը. «Անհոգ մի՛ եղիր քեզանում եղած շնորհքի համար, որ քեզ տրվեց մարգարեությունով երիցության ձեռնադրությամբ» (Ա Տիմոթեոս 4.14): Պողոսը ձեռնադրության միջոցով Տիմոթեոսին հոգևոր պարգև էր փոխանցել, ինչը հաստատել և զորացրել էր նրան ծառայության համար: Տեսնելով, որ նրա պարգևն անարգվում էր՝ Պողոսը նրան գրում է. «Այդ պատճառով միտքդ եմ բերում, որ արծարծես Աստծո այն շնորհքը, որ քեզանում է՝ իմ ձեռքերը քեզ վրա դնելով» (Բ Տիմոթեոս 1.6):

Եկեղեցու պատմության ընթացքում ձեռնադրությունը տարածված գործելակերպ էր՝ նորահավատներին զորացնելու և հաստատելու համար: Այդ առթիվ Պողոսը գրել է. «Որովհետև շատ ցանկանում եմ ձեզ տեսնել, որ մի հոգևոր շնորհք հաղորդեմ ձեզ ձեր հաստատվելու համար» (Հռոմեացիների 1.11):

ԾԱՌԱՅՈՂՆԵՐԻ ՆՇԱՆԱԿՈՒՄ

Երբ Պողոսն ու Բառնաբասը սկսեցին իրենց առաջին միսիոներական ճանապարհորդությունը, եկեղեցու առաջնորդները հավաքվեցին Անտիոքում՝ աղոթքի և ծոմապահության: Տիրոջը միաբան փնտրելիս Սուրբ Հոգին հստակ նշեց, որ այս երկու մարդիկ պետք է նշանակվեին հատուկ հանձնարարության համար. «Մինչ նրանք ծառայում էին Տիրոջը և ծոմ էին պահում, Սուրբ Հոգին ասաց. «Առանձնացրե՛ք Ինձ համար Բառնաբասին և Սողոսին (Պողոսին) այն գործի համար, որին Ես կանչել եմ նրանց»: Այն ժամանակ ծոմ պահեցին և աղոթք արեցին, նրանց վրա *ձեռք դրեցին* ու արձակեցին» (Գործք 13.3):

Լիզան և ես ունեցել ենք Բառնաբասի և Սողոսի նման փորձառություն: 1980-ականների վերջին, երբ երիտասարդական ծառայության հովիվ էի, Աստծո Հոգին հայտնեց ինձ, որ փոփոխություն էր տեղի ունենալու. «Դու դադարելու ես երիտասարդական ծառայության հովիվ լինելուց,- ասաց Նա,- և Ես քեզ ուղարկելու եմ եկեղեցիներ և քաղաքներ՝ Ամերիկայի արևելյան ափից մինչև արևմտյան ափը, Կանադայի սահմանից մինչև Մեքսիկայի սահմանը, Ալյասկա և Հավայան կղզիներ...»:

Սակայն դա տեղի չունեցավ հաջորդ օրը և ոչ էլ հաջորդ շաբաթ: Շատ ամիսներ անցան այն բանից հետո, երբ ես ստացա խոսք այն մասին, որ փոփոխություն է լինելու: Մեկ օր իմ հովիվը եկավ հանդիպման և ասաց, որ Տերն իրեն ցույց է տվել, որ իր թիմի հովիվներից մեկը (թիմում տասնմեկ հոգի էինք) շուտով սկսելու է ամբողջական դրույքով ճամփորդել և այլևս չի ծառայելու որպես եկեղեցու անձնակազմի անդամ: «Ջոն Բիվե՛ր, այդ մարդը դո՛ւ ես»,- ասաց

նա: Կարճ ժամանակ անց՝ 1990 թվականի հունվարին, հովիվը ձեռնադրեց ինձ և Լիզային. այդ պահից ի վեր մենք ամբողջական դրույքով ճամփորդում ենք: Կարելի է ասել, որ մենք ավելի շատ պտուղ ենք տեսել՝ սպասելով Աստծո որոշված ժամանակին, քան երբ մենք ենք գործի անցել՝ կարծելով, թե պատրաստ էինք:

ՀԻՎԱՆԴՆԵՐԻ ԲԺՇԿՈՒԹՅՈՒՆ

Հավատացյալներին ձեռք դնելու միջոցով կարող է փոխանցվել Աստծո բժշկարար զորությունը: Սրա օրինակը ցույց է տվել Հիսուսը, Ով ձեռք դնելով բժշկում էր հիվանդներին ու դուրս հանում դևերին. «Եվ արեգակը մտնելիս ամենքը, որ կերպ-կերպ ցավերով հիվանդներ ունեին, նրանց բերում էին Նրա մոտ: Նա էլ ամեն մեկի վրա ձեռք էր դնում և բժշկում էր նրանց: Շատերից էլ դևեր էին դուրս գալիս» (Ղուկաս 4.40,41):

Մինչ երկինք համբարձվելը Հիսուսը հավատացյալներին հանձնարարեց շարունակել Իր գործը՝ Ավետարանը քարոզելով և սատանայի գործերը քանդելով. «Նրանց էլ, որ հավատացին, այս նշանները կհետևեն. Իմ անունով... հիվանդների վրա ձեռք կդնեն, և նրանք կառողջանան» (Մարկոս 16.17,18):

Ձեռք դնելով մարդկանց վրա՝ մենք շփման կետ ենք ստեղծում՝ թույլ տալով երկնքին ներխուժել երկիր:

//////////////////////////////////////

ՔՆՆԱՐԿՄԱՆ ՀԱՐՑԵՐ

1. Որտեղի՞ց է սկիզբ առել հեղինակությունը, և ինչո՞ւ է այն կարևոր:
2. Բացատրե՛ք, թե ինչ է Սուրբ Գիրքն ասում ձեռնադրության մասին:
3. Թվարկե՛ք ձեռնադրության ծառայության վեց օգտակար կողմերը:

ԳԼՈՒԽ 6

Մեռելների հարություն

«Ուստի, Քրիստոսի մասին սկզբնական խոսքը թողնելով, դեպի կատարյալը գանք՝ առանց կրկին հիմք դնելու... մեռելների հարության և հավիտենական դատաստանի համար» (Եբրայեցիների 6.1,2):

Հարությունը հավատացյալի մեծ հույսն է: Պողոսը գրում է, որ իր նպատակը երկնային պարգևին՝ հարությանը հասնելն է: Նրա հայացքն ուղղված էր կառուցման ընթացքի վերջնական փուլին, այսինքն՝ վերջնական փրկությանը: Նա գրում է. «Որպեսզի մեռելների հարությանը հասնեմ: Ոչ թե արդեն բռնած լինեմ կամ թե արդեն կատարյալ եղած լինեմ, բայց հետևում եմ, որ թերևս հասնեմ նրան, ինչպես որ էլ հենց Քրիստոս Հիսուսից բռնված եմ» (Փիլիպեցիների 3.11,12):

Դուք Աստծո սիրո կիզակետն եք: Ահա թե ինչու է Նա վերադառնալու ձեզ համար և հավիտյան տանելու ձեզ Իր մոտ: Հիսուսն այնքան է ցանկանում, որ ամբողջ հավիտենությունն Իր հետ անցկացնենք, որ մեզ համար տեղ է պատրաստել և պահել, որպեսզի լինենք այնտեղ, որտեղ Ինքն է. «Իմ Հոր տանը շատ բնակարաններ կան. ապա թե ոչ, Ես ձեզ կասեի՝ գնում եմ ձեզ համար տեղ պատրաստելու: Եվ եթե գնամ և ձեզ համար տեղ պատրաստեմ, դարձյալ կգամ և ձեզ Ինձ մոտ կառնեմ, որ որտեղ Ես եմ, դուք էլ լինեք» (Հովհաննես 14.2,3): Նման խոստում ունենալով՝ զարմանալի չէ, թե ինչու են Հոգին ու հարսը կանչում. «Եկ» (Հայտնություն 22.17, NLT):

Երբ ունենք հարության հույս, այլևս մահից վախենալու կարիք չկա: Այս հույսն օգնում է մեզ ապրելու՝ պատրաստ Տիրոջ վերադարձին: Առաջին դարի եկեղեցին ապրել է՝ ամեն վայրկյան սպասելով Հիսուսի վերադար-

ձին և իմանալով, որ Նա կարող է գալ գողի նման՝ գիշերը: Այս հույսը ոչ մի դեպքում իրականությունից փախչելու մտածելակերպ չէր. ընդհակառակը, այն համակեց նրանց հրատապության զգացմամբ՝ դրդելով գրավելու իրենց ազդեցության ոլորտը՝ Աստծո թագավորության նպատակներն իրականացնելու համար:

Հարությունը մեզ մուտք կտա դեպի հավիտենական թագավորություն, որտեղ մենք հավիտյան Տիրոջ հետ կլինենք: Հետևաբար չափազանց կարևոր է, որ հասկանանք, թե ինչ է մեզ սպասում:

Լինելու է երկու հարություն՝ արդարների (Հիսուսի հետևորդների) և ամբարիշտների (իրենց ճանապարհն ընտրածների): Տարբերությունն այն է, որ ամբարշտի հոգին, շունչը և մարմինը կլինեն հավիտյան ապականված, իսկ հավատացյալը կունենա անապական և փառավորված հոգի, շունչ և մարմին: Հարության այս երկու տեսակների վերաբերյալ Հիսուսն ասել է.

> «Ճշմարի՛տ, ճշմարի՛տ ասում եմ ձեզ, թե ժամանակ կգա, և հիմա է, որ մեռելներն Աստծո Որդու ձայնը կլսեն, և լսողները կապրեն... Սրա վրա մի՛ զարմացեք, որովհետև ժամանակ կգա, որ ամենքը, որ գերեզմաններում են, Նրա ձայնը կլսեն: Եվ դուրս կգան նրանք, որ բարի են գործել, դեպի կյանքի հարությունը, և նրանք, որ չար են արել, դեպի դատաստանի հարությունը» (Հովհաննես 5.25,28,29):

Փրկության ամբողջ գործընթացը ըմբռնելու համար մենք պետք է հասկանանք մարդու եռամիասնական էությունը՝ որպես հոգի, շունչ և մարմին. «Եվ Ինքը՝ խաղաղության Աստվածը, ձեզ սուրբ անի բոլորովին, և ձեր ամբողջ հոգին և շունչը և մարմինը անարատ պահվի մինչև մեր Տեր Հիսուս Քրիստոսի գալը» (Ա Թեսաղոնիկեցիների 5.23): Փրկության պահին մեր հոգին անմիջապես փրկվում և արդարանում է Աստծո առջև: Մեր շունչը (միտքը, կամքը, զգացմունքները) փրկվում է նորոգության գործընթացով, մինչդեռ մեր մարմինները դեռ պետք է փրկվեն հարությամբ, որը կամբող-

ջացնի մեր փրկությունը: Այդ ընթացքում մեր մարմինները՝ Աստծո զորությամբ, հրաշքներով և բժշկության պարգևներով, կարող են կանխաճաշակել հարության կյանքը (տե՛ս Ա Կորնթացիների 12-րդ գլուխ և Հռոմեացիների 8.11):

Պողոսի օրերում շատ էին բանավիճում հարության ուսմունքի շուրջ: Շատերի համար այդ գաղափարն օտար էր, ինչպես և Ավետարանի ուղերձը: Տվյալ թեմայի վերաբերյալ ամուր դիրքորոշում ունենալու պատճառով Պողոսը հաճախ էր հայտնվում ընդհարումների և խնդիրների մեջ: Այդուհանդերձ, դա նրան չէր լռեցնում, այլ ավելի էր բարկացնում՝ այնքան, որ նա վտանգում էր իր կյանքը: Պողոսը համարձակությամբ պնդում է.

> «Բայց եթե Քրիստոսը քարոզվում է, թե մեռելներից հարություն է առել, ինչպե՞ս են ձեզնից ոմանք ասում, թե մեռելների հարություն չկա: Եթե մեռելների հարություն չկա, ապա Քրիստոսն էլ հարություն չի առել: Եվ եթե Քրիստոսը հարություն չի առել, ուրեմն ունայն է մեր քարոզությունը, և ունայն է ձեր հավատքն էլ: Եվ մենք էլ Աստծո սուտ վկաներ ենք գտնվում, որ Աստծո համար վկայեցինք, թե Քրիստոսին հարություն տվեց, Որին հարություն չտվեց, եթե արդարև մեռելները հարություն չեն առնում: Որովհետև եթե մեռելները հարություն չեն առնում, ապա Քրիստոսն էլ հարություն չի առել, և եթե Քրիստոսը հարություն չի առել, ունայն է ձեր հավատքը, և դեռ ձեր մեղքերի մեջ եք: Ուրեմն նրանք էլ, որ Քրիստոսում ննջեցին, կորան: Եթե միայն այս կյանքում ունենք հույս Քրիստոսի վրա, բոլոր մարդկանցից ավելի ողորմելի ենք: Բայց հիմա Քրիստոսը հարություն է առել մեռելներից, Ինքը ննջածների առաջնեկ եղավ: Ուրեմն որովհետև մարդով եղավ մահը, և մարդով էլ՝ մեռելների հարությունը: Քանի որ ինչպես Ադամով ամենը մեռնում են, այնպես էլ Քրիստոսով ամենը կենդանանում են: Եվ ամեն մեկն իր կարգում. առաջին պտուղը՝ Քրիստոսը, և հետո՝ Քրիստոսինները՝ Նրա գալու ժամանակում» (Ա Կորնթացիների 15.12-23):

Ինչպես ավելի վաղ՝ հավատքի գլխում քննարկեցինք, Ավետարանի ամենակարևոր փաստերից է Հիսուս Քրիստոսի հարությունը: Հիսուսը հարություն է առել մեռելներից: Հարությունն Ավետարանի ուղերձից հեռացնելը զրկում է այն զորությունից, և մեր հավատքն ունայն է դառնում: Ահա թե ինչու Պողոսը հրաժարվեց Ավետարանի ուսմունքի մեջ փոխզիջում թույլ տալուց. նա թույլ չտվեց, որ հարության մասին ուսմունքը հեռացվեր կամ անտեսվեր:

Հիսուսն առաջին Մարդն էր, Ով հարություն առած մարմին ստացավ: Հիսուսի հարությունը երաշխավորում է, որ նույնը տեղի կունենա նաև մեզ հետ: Նա է մեր հույսը: Մենք հավաստիացում ունենք մարմնավոր հարության մասին մեզանում բնակվող Սուրբ Հոգու միջոցով, Որը «մեր ժառանգության գրավն է» (Եփեսացիների 1.13,14): Պողոսը համարձակությամբ գրել է. «Քրիստոսն ապրում է ձեզանում, ուստի նույնիսկ եթե ձեր մարմինը մահանա մեղքի պատճառով, Հոգին ձեզ կյանք կտա, քանի որ դուք արդարացած եք Աստծո առջև: Աստծո Հոգին, Ով Հիսուսին հարություն է տվել մեռելներից, ապրում է ձեր մեջ: Եվ ինչպես Աստված Հիսուս Քրիստոսին հարություն է տվել մեռելներից, ձեր մահկանացու մարմիններին էլ կյանք կտա նույն Հոգով, որ ձեզանում է» (Հռոմեացիների 8.10,11, NLT):

Սա հրաշալի լուր է: Աստծո Հոգին բացում է մեր ախորժակը՝ թույլ տալով մեզ համտեսել այն, ինչը սպասվում է ապագայում: Նա երկինքը դնում է մեր սրտերում, որպեսզի երբևէ չհամաձայնենք դրանից ավելի պակասին: Պողոսը հայտնում է, որ մենք պետք է այս հույսով քաջալերենք միմյանց.

> «Չենք կամենում, եղբայրնե՛ր, որ տգետ լինեք ննջեցյալների նկատմամբ. որ չտրտմեք, ինչպես ուրիշները, որ հույս չունեն: Որովհետև եթե հավատում ենք, որ Հիսուսը մեռավ և հարություն առավ, այնպես էլ Աստված ննջեցյալներին Հիսուսի ձեռքով կբերի Նրա հետ: Որովհետև սա ենք ասում ձեզ Տիրոջ Խոսքով,

թե մենք, որ կենդանի մնացած ենք մինչև Տիրոջ գալը, ննջեցյալներից չենք առաջանա: Որովհետև Ինքը՝ Տերը, հրամանով, հրեշտակապետի ձայնով և Աստծո փողով վայր կգա երկնքից, և Քրիստոսով մեռելներն առաջ հարություն կառնեն, և հետո մենք, որ կենդանի ենք մնացած, նրանց հետ մեկտեղ ամպերով օդի մեջ կհափշտակվենք՝ Տիրոջը դիմավորելու, և այնպես ամեն ժամանակ Տիրոջ հետ կլինենք: Ուրեմն իրար մխիթարե՛ք այս խոսքերով» (Ա Թեսաղոնիկեցիների 4.12-17):

Աստվածաշունչը հստակ ասում է, որ երբ Հիսուսը վերադառնա Իր հարս եկեղեցու հետևից, մենք կփոխակերպվենք: Մեր մարմիններն անմիջապես կփոխակերպվեն: Պողոսն օգտագործում է հողում ցանված սերմի այլաբանությունը՝ բացատրելու հարությունը: Ակներևաբար, հողից վեր է բարձրանում մի բան, ինչը չէր ցանվել՝ ավելի փառավոր մի բան:

«Այնպես էլ մեռելների հարությունը. սերմվում է ապականությունով և հարություն է առնում անապականությունով: Սերմվում է անարգությունով և հարություն է առնում զորությունով: Սերմվում է շնչավոր մարմին, և հարություն է առնում հոգևոր մարմին. կա շնչավոր մարմին, կա և հոգևոր մարմին: Այսպես էլ գրված է, թե առաջին մարդը՝ Ադամը, կենդանի շունչ եղավ, երկրորդ Ադամը՝ կենդանարար հոգի: Միայն թե սկզբում հոգևորը չէ, այլ շնչավորը, և հետո հոգևորը: Առաջին մարդը երկրից է՝ հողեղեն, բայց երկրորդ մարդն է Տերը՝ երկնքից: Ինչպես հողեղենը, այնպես էլ հողեղենները, և ինչպես երկնավորը, այնպես էլ երկնավորները: Եվ ինչպես հողեղենի պատկերը հագանք, երկնավորի պատկերն էլ պիտի հագնենք: Միայն թե սա եմ ասում, եղբայրնե՛ր, որ մարմինը և արյունը չեն կարող Աստծո արքայությունը ժառանգել, և ոչ էլ ապականությունը ժառանգում է անապականությունը: Ահա մի խորհուրդ եմ ասում ձեզ. ոչ թե ամենքս կննջենք, այլ ամենքս կփոխվենք: Հանկարծ՝ մի ակնթարթում՝ հետին փողի ժամանակ, որովհետև

> փողը կփչվի, և մեռելները հարություն կառնեն անապականելի, և մենք կփոխվենք: Որովհետև պետք է որ այս ապականացուն հագնի անապականությունը, և այս մահկանացուն հագնի անմահությունը: Եվ երբ որ այս ապականացուն անապականությունը կհագնի, և այս մահկանացուն՝ անմահությունը, այն ժամանակ կլինի այն խոսքը, որ գրված է, թե՝ մահն ընկղմվեց հաղթության մեջ» (Ա Կորնթացիների 15.42-54):

Այս սուրբգրային հատվածում Պողոսը նշում է չորս տարբեր փոփոխություններ, որոնք տեղի կունենան, երբ մեր բնական մարմինները վերափոխվեն:

Ապականությունից դեպի անապականություն: Նոր մարմինը մահ կամ քայքայում չի ճաշակի, այլ հավիտենապես առողջ և ուժեղ կմնա: Մահը զորություն չի ունենա նոր մարմնի վրա: Հավատացյալները բարի նկատառումներով հաճախ հարցնում են. «Ինչո՞ւ են քրիստոնյաները շարունակում հիվանդանալ և մահանալ»: Պատասխանը բազմաբնույթ է, սակայն կա մեկ բան, որ ճշմարիտ է. մեր մարմինները դեռևս փրկված չեն: Այնուամենայնիվ, ինչպես արդեն նշվեց, մինչև որ մենք ստանանք մեր վերջնական փրկությունը, Աստված շնորհել է Իր Հոգու պարգևները, որոնք բժշկություններ և հրաշքներ են մատակարարում: Գալու է այն օրը, երբ Աստված սրբելու է բոլոր արցունքները, և մենք այլևս ցավ ու տառապանք չենք ճաշակելու:

Անպատվությունից դեպի փառք: Մեր նոր մարմինները կլինեն փառավորված. դրանք այլևս չեն մատնվի հիվանդության, ախտի, վնասվածքների և տկարությունների: Հարություն առած այդ մարմինները հոյակապ են լինելու և առավելագույն արդյունավետություն են ունենալու: Դանիել մարգարեն կանխասել է. «Եվ երկրի հողում գնացողներից շատերը պիտի զարթնեն... Եվ իմաստունները պիտի փայլեն երկնքի հաստատության լույսի պես, և շատերին արդարության առաջնորդողները՝ աստղերի պես հավիտյանս հավիտենից» (Դանիել 12.2,3):

Տկարությունից դեպի զորություն: Հարության մար-

մինները չեն ունենա քնի, հանգստի կամ վերականգնման կարիք: Մենք չենք իմանա, թե ինչ բան է հոգնածությունը, այլ կլինենք կյանքով և էներգիայով լի: Կունենանք նաև գերբնական կարողություններ, որոնք անծանոթ են մահկանացուներին: Պողոսը գրել է. «Այլ մենք երկնքի քաղաքացիներ ենք, որտեղ Տեր Հիսուս Քրիստոսն է ապրում: Նա կվերցնի մեր տկար մահկանացու մարմինները և կվերափոխի՝ տալով Իր մարմնի նման փառավոր մարմիններ՝ այն զորությամբ, որով ամեն բան Իրեն է ենթարկեցնում» (Փիլիպեցիների 3.20,21, NLT):

Բնականից դեպի գերբնական: Այս նոր մարմնի նյութը կտարբերվի մսեղեն մարմնից: Այն նախատեսված է հավիտենության համար, սակայն ունենալու է թե՛ բնական և թե՛ գերբնական հարթություններում գործելու կարողություն: Հիսուսի հարությունից հետո տեսնում ենք, որ Նրա մարմինը ենթակա չէր ձգողականության ուժին (տե՛ս Գործք 1-ին և Հայտնություն 11-րդ գլուխներ), այն կարող էր անցնել պատերի միջով (տե՛ս Հովհաննես 20.19,26), սակայն հնարավոր էր նաև հպվել դրան, այն գոլորշու կամ «ուրվականի» նման չէր (տե՛ս Հովհաննես 20.27), այն կարող է ֆիզիկական կերակուր ուտել (տե՛ս Ղուկաս 24.41-43) և կարող էր լինել թե՛ տեսանելի, թե՛ անտեսանելի (տե՛ս Ղուկաս 24.31):

Այս փոփոխություններն ընդամենը փոքր մասն են այն ամենի, ինչ Տերը ծրագրել է մեզ համար: Պողոսը մեծ սպասումով հետևյալ խոսքերն է ասում. «Եվ մենք՝ հավատացյալներս, նույնպես հառաչում ենք, չնայած որ մեր ներսում ունենք Սուրբ Հոգուն՝ որպես գալիք փառքի կանխաճաշակում, քանի որ տենչում ենք, որ մեր մարմինները ազատվեն մեղքից և տառապանքից: Մենք նույնպես սպասում ենք եռանդագին հույսով այն օրվան, երբ Աստված կտա մեզ մեր ամբողջական իրավունքները՝ որպես Իր որդեգրված զավակների՝ ներառյալ այն նոր մարմինները, որ Նա խոստացել է մեզ» (Հռոմեացիների 8.23, NLT):

Մենք ներքուստ հառաչում ենք՝ սպասելով վերջնական

փրկությանը՝ հարությանը: Պողոսն այս փափագը հրաշալի է նկարագրում. «Հառաչում ու տանջվում ենք, քանի դեռ ապրում ենք այս հողեղեն մարմիններում, սակայն այնպես չէ, որ ցանկանում ենք մահանալ և ազատվել այս մարմիններից, որ մեր վրանն են: Փոխարենը ցանկանում ենք հագնել մեր նոր մարմինները, որ այս մահկանացու մարմինները կյանքի մեջ ընկղմվեն» (Բ Կորնթացիների 5.4, NLT): Կ. Ս. Լյուիսն առաջարկել է հրաշալի բացատրություն այս ներքին անբավականության համար. «Եթե տեսնում եմ, որ ներսումս կա մի այնպիսի փորձառության ցանկություն, որն այս աշխարհը չի կարող բավարարել, ապա, ամենայն հավանականությամբ, ստեղծված եմ մեկ այլ աշխարհի համար»:

Հիսուսը վերադառնում է և ընդունելու է մեզ Իր մոտ: Որպես հավատացյալներ՝ մենք ստեղծված ենք փառահեղ ապագայի համար: Թո՛ւյլ տվեք, որ այս հույսը խարսխվի ձեր սրտերում:

> «Ուստի դեն մի՛ գցեք այս ամուր վստահությունը Տիրոջ հանդեպ: Հիշե՛ք այն մեծ պարգևը, որ դրա համար ստանալու եք: Հիմա ձեզ համբերություն է անհրաժեշտ, որպեսզի շարունակեք Աստծո կամքն անել, և ապա կստանաք ամենը, ինչ Նա խոստացել է: «Մի փոքր անց կգա Նա, որ գալու էր, և չի ուշանա: Իմ արդարները հավատքով կապրեն, սակայն Ես չեմ ախորժի նրանց, ովքեր հետ կշրջվեն»: Մենք Աստծուց շրջվողների նման չենք, ովքեր իրենք իրենց են կործանում: Մենք հավատարիմներ ենք, որոնց անձերը կփրկվեն» (Եբրայեցիների 10.35-39, NLT):

ՔՆՆԱՐԿՄԱՆ ՀԱՐՑԵՐ

1. Որո՞նք են մեր փրկության երեք փուլերը: Համառոտ ներկայացրե՛ք յուրաքանչյուրը:
2. Որո՞նք են այն չորս ակնհայտ փոփոխություն-

ները, որ տեղի են ունենալու մեր մարմիննե-
րում հարությունից հետո:

3. Ինչո՞ւ է հարությունն ամեն հավատացյալի
հույսը:

4. Մինչ կստանանք վերջնական փրկությունը՝
մեր մարմինների փրկագնումը, ի՞նչ է Աստ-
ված տվել մեզ՝ մահվանը հաղթելու համար:

ԳԼՈՒԽ 7

Հավիտենական դատաստան

«Ուստի, Քրիստոսի մասին սկզբնական խոսքը թողնելով, դեպի կատարյալը գանք՝ առանց կրկին հիմք դնելու… հավիտենական դատաստանի համար» (Եբրայեցիների 6.1,2):

Որքան սարսափելի կլիներ մուտք գործել հավիտենություն և գիտակցել, որ այն, ինչ կարծում էինք, թե գիտեինք, սխալ էր: Ֆիլմերը և լրատվությունը մեր մտքերը լցրել են սխալական գաղափարով այն մասին, թե իբր երկինքը պարզապես բաղկացած է մանուկ հրեշտակներից, որոնք ջութակ են նվագում և սավառնում ամպերի վրա: Մեզնից շատերը մեծ ուշադրություն չեն դարձնում հավիտենությանը՝ կարծելով, թե մահից հետո կյանք չկա: Առավել մոլորեցնող է այն միտքը, թե իբր բոլոր ճանապարհները տանում են երկինք:

Այս թյուրըմբռնումները երկնքի մասին՝ այլ սխալ պատկերացումների հետ մեկտեղ, հեռու են ճշմարտությունից: Աստվածաշունչը շատ բան է ասում երկնքի, հավիտենության և դատաստանի մասին: Ըստ Սուրբ Գրքի՝ տեղի է ունենալու երկու մեծ դատաստան: Այդ երկու դատաստանների միջև տարբերակիչն այն է, թե ինչ աթոռի վրա է նստելու Դատավորը:

Դատաստանի այդ երկու աթոռներն են.

Մեծ սպիտակ աթոռը: Այստեղ կդատվեն բոլոր մնացյալ հանգուցյալները, որոնք հարություն կառնեն հազարամյակի ավարտին: Սրանք այն մարդիկ են, որոնք չեն ընդունել Աստծո փրկությունը և, հետևաբար, չեն հափշտակվել Հիսուսի մոտ, երբ Նա վերադարձել է Իր եկեղեցու հետևից:

Քրիստոսի դատաստանի աթոռը: Այստեղ է, որ

դատվելու են Քրիստոսի հետևորդները և ծառաները՝ ոչ թե դատապարտության, այլ պարգևատրման համար:

Հավատացյալների դատաստանը հասկանալու համար տեսնենք, թե ինչ է գրել Պողոսն այդ օրվա մասին.

> «Նրա համար էլ ջանք ենք անում, որ թե՛ կենանք և թե՛ դուրս գնանք, հաճո լինենք Նրան: Որովհետև մենք՝ ամենս, պետք է հայտնի լինենք Քրիստոսի ատյանի առջև. որ ամեն մեկն ընդունի իր մարմնով ինչ որ գործեց՝ թե՛ բարի և թե՛ չար» (Բ Կորնթացիների 5.9,10):

Բազմաթիվ քրիստոնյաներ տեղյակ չեն, որ հաշիվ են տալու իրենց կյանքերի համար: Հավատացյալները դատվելու են: Որոշումներ են կայացվելու: Շատ քրիստոնյաներ կարծում են, թե իրենց փրկությամբ գալիք դատաստանը ի չիք է դառնալու: Իսկապես, Հիսուսի արյունը մաքրում է մեզ մեղքերից, որոնք թույլ չէին տա մուտք գործել Արքայություն: Այդուհանդերձ, այն չի ազատում մեզ այն դատաստանից, որը վերաբերում է մեր լավ կամ վատ վարքին՝ որպես հավատացյալների:

Երբ մտածում ենք հավատացյալների դատաստանի մասին, պետք է հասկանանք, թե ինչով է այն տարբերվում անհավատների դատաստանից: Հավատացյալների դատաստանը տեղի կունենա շատ ավելի վաղ, քան Սպիտակ աթոռի մեծ դատաստանը: Ժամանակները հստակեցված չեն Աստվածաշնչում: Սակայն գիտենք, որ դա տեղի է ունենալու այն բանից հետո, երբ եկեղեցին ամպերով օդի մեջ կհափշտակվի (տե՛ս Ա Թեսաղոնիկեցիների 4.13-18), և մինչև Քրիստոսի հազարամյա թագավորության սկիզբը: Ուստի գրեթե հազար տարվա հեռավորություն կա երկու մեծ դատաստանների միջև:

Քրիստոսի աթոռի դատաստանը բառացիորեն Աստծո աստվածային ատյանն է: Սուրբ Գիրքը հռչակում է, որ Հայրը Որդուն է հանձնել ամբողջ դատաստանը (տե՛ս Հովհաննես 5.22): Հիսուս Քրիստոսը մեր միակ Փրկիչն է, բայց Նա նաև մեր Դատավորն է և շուտով դատելու է Իր տունը: Բնագրում գործածված «դատաստան» բառի

ամենապարզ սահմանումն է՝ *հետաքննության արդյունքում կայացված որոշում՝ կողմ կամ դեմ որոշում:*

Մարդու արձագանքը Ավետարանին որոշում է, թե *որտեղ* է նա անցկացնելու հավիտենությունը՝ երկնքո՞ւմ, թե՞ դժոխքում: Մինչդեռ հավատացյալի կենսակերպը որոշում է, թե *ինչպես* է նա անցկացնելու հավիտենությունը: Այս դատաստանի վերաբերյալ շփոթությունները ցրելու համար ուսումնասիրենք հավատացյալի դատաստանին վերաբերող չափանիշները:

Դատապարտություն չկա: Քրիստոսին ճշմարտապես հավատացողները երբեք չեն դատվի այնպես, որ այդ դատաստանի ելքը լինի դատապարտությունը: Իրականում, Քրիստոսին ճշմարտապես հավատացողներն իրենց մեղքերի համար չեն դատվելու, քանի որ Հիսուսն արդեն իսկ վճարել է դրանց գինը:

> «Ուրեմն հիմա դատապարտություն չկա Հիսուս Քրիստոսում լինողների համար, որ մարմնավորապես չեն վարվում, այլ հոգևորապես» (Հռոմեացիների 8.1):

> «Նրան հավատացողը չի դատապարտվի, իսկ չհավատացողն արդեն դատապարտված է, որովհետև չհավատաց Աստծո միածին Որդու անվանը» (Հովհաննես 3.18):

> «Ապա թե մեր մեղքերը խոստովանենք, Նա հավատարիմ է և արդար, որ մեր մեղքերը ների և սրբի մեզ ամեն անիրավությունից» (Ա Հովհաննես 1.9):

Լինելու են հավիտենական պարգևներ կամ կորուստներ: Աստվածաշունչը հայտնում է, որ հավիտենական վարձատրությունները և դիրքերը, որոնք տրվում են հավատացյալներին, ոչ միայն տարբերվելու են միմյանցից, այլև ընդգրկելու են լայն համայնապատկեր՝ ամեն ինչի կորստից և այրվելուց մինչև Քրիստոսի կողքին ամբողջ հավիտենության ընթացքում թագավորելը: Այդ պատճառով Հովհաննես առաքյալը հորդորում է.

> «Զգո՛ւյշ կացեք ձեր անձերից, որ չկորցնենք այն, որ

վաստակեցինք, այլ որ ամբողջ վարձքն առնենք» (Բ Հովհաննես 8):

Կրկին՝ վարձատրությունը տարբեր է լինելու. լինելու են ամբողջական, մասնակի և զրոյական վարձատրություններ: Շատերս վեր ենք թռչում, երբ մեր կյանքերի վերաբերյալ լսում ենք «կորսված» կամ «այրված» բառերը: Մեզ համար դժվար է հավատալ, որ երկնքում կարող է նման բան պատահել: Կրկին սրա պատճառը երկնքի և հավիտենության մասին մեր թյուրըմբռնումն է: Այդուհանդերձ, Սուրբ Գիրքը սրա մասին շատ պարզ է խոսում: Պողոսը գրել է.

«Որովհետև մենք Աստծո գործակիցներն ենք, դուք՝ Աստծո մշակությունը՝ Աստծո շինվածքն եք: Աստծո շնորհքի չափով, որ ինձ տրված է, իմաստուն ճարտարապետի պես հիմք դրեցի, բայց ուրիշը շինում է. միայն թե ամեն մեկը մտիկ տա, թե ինչպես է շինում: Որովհետև ոչ ոք ուրիշ հիմք չի կարող դնել, քան որ դրված է, Որը Հիսուս Քրիստոսն է: Եթե մեկն այս հիմքի վրա շինի ոսկի, արծաթ, ազնիվ քարեր, փայտ, խոտ, եղեգ, ամեն մեկի գործը պիտի հայտնվի, որ օրը կերևացնի, որովհետև կրակով պիտի հայտնվի: Եվ ամեն մեկի գործը, թե ինչպես է, կրակը կփորձի: Եթե մեկի գործը, որ շինեց, հաստատ մնա, վարձք կառնի, և եթե մեկի գործն այրվի, վնաս կքաշի, բայց ինքը կապրի՝ այնպես, ինչպես թե կրակով» (Ա Կորնթացիների 3.9-15):

Վերադառնալով շինարարության այլաբանությանը՝ մենք ենք որոշում ինչպես կառուցել մեր կյանքերը, իսկ մենք ունենք կառուցելու երկու տարբերակ: Տարբերակներից մեկն է՝ ձգտել ժամանակավորին, ինչը բավականություն է պատճառում մեր անկում ապրած բնությանը (փայտ, խոտ, ծղոտ): Մյուսը մեր վերստին ծնված հոգու ցանկության համեմատ ապրելն է՝ հետևելով Աստծո հավիտենական Խոսքին (ոսկի, արծաթ, թանկարժեք քարեր): Այն, թե ինչպես ենք ընտրում ապրել մեր կյանքերը, որոշում է, թե ինչ տեղի կունենա, երբ Աստ-

ծո ներկայության կրակը քննի մեր գործերը: Ոչ միայն քննվելու են մեր գործերը, այլև բացահայտվելու են մեր մտքերը և դրդապատճառները:

Ահա այն հիմնական ոլորտները, որոնք Հիսուսը քննելու է.

Իրագործե՞լ եք ձեր կոչումը: Բոլորն իրենց կյանքերի համար ունեն աստվածային կոչում: Մեզնից յուրաքանչյուրը կարևոր դեր ունի Աստծո արքայության առաջխաղացման գործում: Քրիստոսի դատաստանի աթոռի առջև մենք հաշիվ ենք տալու այն նպատակի, կոչման և պարգևների համար, որ Աստված տվել է: Պողոսը գրել է. «Քանի որ Աստծո պարգևները և Նրա կոչումը երբեք վեր չեն առնվի» (Հռոմեացիների 11.29, NLT): Կարևոր է, որ մենք իմանանք, որ դատվելու ենք ոչ թե ըստ նրա, ինչ արել ենք, այլ ինչ կանչված էինք անելու: Ովքեր կանչված են ծառայության մեջ, մտել են գործարարության ոլորտ: Իսկ ծառայության մեջ մտել են նրանք, ովքեր կանչված են լինելու գործարարության, մանկավարժության, կառավարության կամ կրթության ոլորտներում և այդպես շարունակ: Ինչ վերաբերում է մեր կոչմանը, բոլորս հաշվետու ենք Աստծուն դրա համար: Բացահայտե՛ք ձեր կոչումը և առավելագույնս ընթացե՛ք դրա համեմատ:

Ինչպե՞ս եք տնտեսվարել այն ամենը, ինչը վստահվել է ձեզ: Տաղանդների առակի միջոցով Հիսուսը բացատրել է տնտեսվարության սկզբունքը: Առակում Նա Երկնքի արքայությունը համեմատում է հեռավոր երկիր ճամփորդող մարդու հետ (խորհրդապատկերում է Հիսուսին), ով իր ծառաներին տաղանդներ է վստահում: Մեկին տալիս է հինգը, մյուսին՝ երկուսը, երրորդին՝ մեկը: Երբ ճամփորդությունից վերադառնում է, կանչում է իր ծառաներին և հաշիվ պահանջում այն տաղանդների համար, որոնք վստահել էր նրանց: Առաջին երկուսը, որ բազմապատկել էին իրենց տաղանդները, վարձատրվեցին, իսկ երրորդը, որը թաղել էր իր տաղանդը, կորուստ կրեց: Տերը գոհ չէր նրանից (տե՛ս Մատթեոս 25.14-29): Բոլոր հավատացյալները չէ, որ ստանում են միևնույն պարգևները կամ կոչումը, սակայն Տերը յու-

րաքանչյուրիս վստահում է տնտեսվարության որոշակի մաս: Եվ յուրաքանչյուրը հաշիվ է տալու իր ստացածի չափով: Աստված կանչել է ձեզ՝ բազմապատկելու այն, ինչը Նա դրել է ձեր ձեռքերի մեջ: Իսկ դո՞ւք ինչ կառաջարկեք Նրան ի պատասխան:

Անձնապես ինչպե՞ս եք ազդել ուրիշների վրա: Մենք հաշիվ ենք տալու այն բանի համար, թե ինչպես ենք վերաբերվել ուրիշներին: Շրջապատող մարդկանց նկատմամբ մեր բարության քայլերը խոր ազդեցություն ունեն մեզ համար պահված հավիտենական վարձատրության վրա: Այն, թե ինչպես ենք վերաբերվում ուրիշներին, պայմանավորված է նրանով, թե ինչպես ենք ընդունում նրանց. սա երևում է նրանից, թե ինչպես ենք վերաբերվում մեր ընտանիքի անդամներին, հարևաններին, գործընկերներին և սպասարկող աշխատակիցներին, ինչպես, օրինակ՝ մատուցողներին: Բացի մարդկանց նկատմամբ մեր վերաբերմունքից՝ ամենամեծ ազդեցությունը, որ կարող ենք թողնել, նրանց դեպի Հիսուսն առաջնորդելն է. «Իմաստունը մարդկային կյանքեր է շահում [Աստծո համար՝ ինչպես ձկնորս. նա հավաքում և տանում է նրանց դեպի հավիտենություն]» (Առակաց 11.30, AMP):

ՎԱՂԵ՞Ք ՁԵՐ ԸՆԹԱՑՔԸ

Եթե իմանայիք, որ ունեք մեկ օր՝ որոշելու, թե որտեղ և ինչպես եք անցկացնելու գալիք մեկ միլիոն տարին, դա կփոխե՞ր այն, թե ինչպես եք ապրում այդ մեկ օրը: Վստահ եմ, որ այդ մեկ օրը նպատակային կապրեիք:

Սա նման է այն հնարավորությանը, որը մենք՝ հավատացյալներս, ունենք երկրի վրա մեզ տրված ժամանակը առավելագույնս օգտագործելու համար:

Մեր օրերը հոսում են ավազի ժամացույցի ավազահատիկների նման: Կարևոր են ամեն տարին, ամիսը, շաբաթը, օրը և ժամը: Կյանքը կարճ է՝ համեմատած հավիտենության հետ: Մովսեսը հասկացել էր, որ երկրի վրա մեր ապրած կյանքը արձագանքելու է ամբողջ հավիտենության մեջ, ուստի աղոթել է. «Սովորեցրո՛ւ մեզ

լավագույնս օգտագործել ժամանակը... և հաջողությամբ պսակի՛ր մեր ջանքերը: Այո՛, հաջողությա՛մբ պսակիր մեր ջանքերը» (Սաղմոս 90.12,17, NLT):

Հավիտենության հեռանկարով ապրելը կմեծացնի երկրի վրա մեր ժամանակի և ջանքերի արդյունավետությունը: Մենք կսկսենք այլ կերպ որոշումներ կայացնել և համբերել բաների, որոնց չէինք համբերի, եթե հավիտենության հեռանկար չունենայինք:

Պողոս առաքյալը հասկացել էր երկրի վրա մեր ժամանակը լավ տնտեսվարելու կարևորությունը: Կյանքի վերջին օրերում նա գրել է. «Բարի պատերազմը պատերազմեցի, ընթացքը կատարեցի, հավատքը պահեցի. այսուհետև մնում է արդարության պսակը, որ Տերը կտա ինձ այն օրը, Արդար Դատավորը, և ոչ միայն ինձ, այլև ամենին, որ սիրեցին Նրա հայտնությունը» (Բ Տիմոթեոս 4.7,8):

Ձեր կյանքն այս երկրի վրա կարևոր է: Ձեր հայացքը ուղղե՛ք մրցանակին. պատերազմե՛ք, վազե՛ք ձեր ընթացքը, հավատքը պահե՛ք: Թող որ ձեր կյանքը նշանակություն ունենա ոչ միայն հիմա, այլև հավիտենության մեջ:

ՔՆՆԱՐԿՄԱՆ ՀԱՐՑԵՐ

1. Լրացրե՛ք բաց թողած հատվածները: Այն, թե ինչպես ենք արձագանքում խաչին, որոշում է, թե _____ կանցկացնենք հավիտենությունը. այն, թե ինչպես ենք ապրում մեր կյանքը որպես հավատացյալ, որոշում է, թե _____ կանցկացնենք մեր հավիտենությունը:
2. Ո՞րն է Մեծ սպիտակ աթոռի դատաստանի և Քրիստոսի աթոռի դատաստանի տարբերությունը:
3. Ինչո՞ւ է հավիտենության տեսանկյունից կարևոր այն ժամանակը, որն անցկացնում ենք երկրի վրա: Թվարկե՛ք այն ոլորտները, որոնցում հավատացյալները դատվելու են:
4. Ինչպե՞ս է հավիտենության հեռանկարով ապրելը ազդում մեր կենսակերպի վրա:

ՀԵՂԻՆԱԿԻ ԵԶՐԱՓԱԿԻՉ ԽՈՍՔԸ

Շնորհավորում եմ: Բարի գալո՛ւստ Աստծո ընտանիք: Այս պահից ի վեր դու սկսում ես քո կյանքի ամենանշանակալի ճամփորդությունը: Եվ սա միայն սկիզբն է: Եբրայեցիների թղթի հեղինակը խրախուսում է.

> «Ուրեմն եկե՛ք շարունակենք և անցնենք Քրիստոսի (Մեսիայի) ուսմունքների և վարդապետության տարրական փուլից՝ կայուն կերպով առաջանալով դեպի այն ամբողջականությունը և կատարելությունը, որոնք հատուկ են հոգևոր հասունությանը» (Եբրայեցիների 6.1, AMPC):

Դու Աստծո զավակ ես, և ինչպես ցանկացած բարի Հայր, Աստված ցանկանում է, որ աճես: Հոգևոր աճի ընթացքը սկսվում է Քո վերստին ծնունդի պահից: Խնդրում եմ, հասկացի՛ր, որ հոգևոր հասունությունը նպատակակետ չէ, այլ աստիճանական զարգացման ընթացք: Պողոս առաքյալը հավաստիացնում է. «Ես լիովին համոզված եմ, որ Նա, Ով ձեզանում սկսել է այս փառավոր ընթացքը, հավատարմորեն կշարունակի ձեզ հասունացնելու գործընթացը և կավելացնի վերջին նրբագծերը մինչև մեր Տեր Հիսուս Քրիստոսի հայտնվելը» (Փիլիպեցիների 1.6, TPT): Մինչև Հիսուսի գալուստը դու պատրաստման ընթացքի մեջ ես:

Երբ մարդը վերստին ծնվում է, նրա ներսում անմիջապես նոր հոգևոր բնություն է ստեղծվում, որի աճի համար հոգևոր սնուցում և հիմնարար ուսմունք են հարկավոր: Աստծո Խոսքը մեր անձերին տալիս է այն սնուցումը, որի կարիքն ունենք և ցանկանում ենք:

Հոգևոր աճը ինքնաբերաբար տեղի չի ունենում. աճի և զարգացման համար անհրաժեշտ է նպատակաուղղվածություն: Քաջալերո՛ւմ եմ, որ այս ոգևորիչ նորությունը փոխանցես մեկ այլ հավատացյալի: Կարևոր

է նաև միանալ Աստվածաշնչին հավատացող տեղական եկեղեցու և ունենալ համայնք, որը կքաջալերի քեզ նոր հավատքի ընթացքի մեջ:

Սիրով՝
Ջոն

Հ.Գ. Մենք ցանկանում ենք շարունակել քեզ զինելը: Անվճար առցանց նյութեր ձեռք բերելու համար այցելի՛ր **www.MessengerX.com**

ՍԱՏԱՆԱՅԻ ԽԱՅԾԸ

Ապրել վիրավորանքի մահացու թակարդից ազատ

«Սատանայի խայծը» գիրքը բացահայտում է ամենախորամանկ ծուղակներից մեկը, որ թշնամին օգտագործում է հավատացյալներին Աստծո կամքից հեռացնելու համար: Շատերը գտնվում են այս ծուղակի մեջ և նույնիսկ չեն գիտակցում դա:

Մի՛ խաբվեք: Քրիստոսն ասաց. «Անկարելի է, որ գայթակղություններ չգան» (Ղուկաս 17.1): Դուք չեք կարող այնպես անել, որ ձեզ երբևէ չվիրավորեն, բայց դո՛ւք պետք է որոշեք, թե ինչպես պատասխանեք վիրավորանքին: Եթե ճիշտ վերաբերվեք վիրավորանքին, ապա դառնանալու փոխարեն՝ կդառնաք ավելի ուժեղ: Միայն ա՛յս դեպքում ոչինչ չի կարող խոչընդոտել Աստծո հետ ունեցած ձեր շփումը:

Այս ուղերձի միջոցով Ջոն Բիվերը կզորացնի ձեզ, որպեսզի մնաք Աստծո կամքի մեջ և ազատվեք կասկածամտությունից և թերահավատությունից: Դուք կարող եք ազատվել զոհ լինելու մտածելակերպից և ապրել առանց դառնության և առանց հիասթափության բեռի: Երբ հայտնաբերեք, որ կա Աստծուն հնազանդվելու ավելի բարձր մակարդակ, ձեր կյանքը կլցվի ներելու կարողությամբ, հաշտությամբ և հարատև ուրախությամբ:

Հասանելի է **MessengerX.com** կայքում

MessengerX

Աշակերտական ընթացք յուրաքանչյուրի համար, ամենուր

- **Անվճար ավելի քան 125 լեզուներով**
- Հասանելի որպես հավելված և առցանց
- Նյութեր՝ նախատեսված ձեր աճի համար
- Հետևե՛ք ձեր դիտումներին և աշակերտական ուղուն



Ստացե՛ք «Messenger»-ի աշակերտական նյութերի ամբողջական դարանը՝ էլեկտրոնային գրքեր, աուդիո գրքեր, կարճամետրաժ ֆիլմեր, վիդեո ուսուցումներ, Աստվածաշնչեր և ավելին. դիտե՛ք, կարդացե՛ք և լսե՛ք ձեր բոլոր սարքերով:



MessengerX.com

Հասանելի է App Store

Հասանելի է Google Play

Հասանելի է աշխարհով մեկ «App Store»-ում և «Google Play»-ում

Դու ստեղծված ես հավիտենության համար

Աստվածաշնչում շինարարության այլաբանությունը գործածվում է՝ նկարագրելու հավատացյալի կյանքի շինության ընթացքը: Ճիշտ հիմքի առկայության պարագայում շինությունը կարող է հազարավոր մետրեր վեր խոյանալ: Հիմքով է որոշվում շինության ամրությունը:

Հիմքը փորելու աշխատանքներից սկսած՝ շինարարները պետք է հետևեն հատուկ հակատագծի, որը նախագծել են ինժեներները, որպեսզի կառուցման աշխատանքները ճիշտ ընթանան: Նույնպես էլ Աստված՝ Գլխավոր Շինարարը, ունի մեր կյանքերի հատուկ հատակագիծն ու նախագիծը, որոնց կարող ենք ծանոթանալ՝ Նրա Խոսքն ուսումնասիրելով և Նրա Հոգուն հանձնվելով:

Աստծո Խոսքի հիմնարար ճշմարտությունները, որոնց վրա պետք է կառուցենք մեր կյանքը, շարադրված են Եբրայեցիների գրքում՝ ապաշխարություն մեռած գործերից, հավատք առ Աստված, մկրտություններ, ձեռնադրություն, մեռելների հարություն, հավիտենական դատաստան (Եբրայեցիների 6.1,2):

Յուրաքանչյուր հավատացյալ պետք է հիմնված և հաստատված լինի այս հիմնարար ճշմարտությունների վրա, որպեսզի կարողանա հասունանալ Քրիստոսի մեջ: Առանց այս հիմնարար ճշմարտությունների կառուցելը կարելի է համեմատել կրթական բարձունքների ձգտելու հետ, երբ չունես տարրական կրթություն, ինչպես, օրինակ՝ կարդալու և գրելու կարողություն:

Այս գրքում Ջոն Բիվերը քննարկում է նշված հիմնարար ճշմարտությունները և օգնում ամուր հիմք դնելու: Ժամանակն է բարձրանալու աշտարակի պես և աճելու՝ ձեր լիարժեք հասակին հասնելով:

Եկեք իմաստությամբ կառուցենք:

ՋՈՆ ԲԻՎԵՐԸ միջազգային քարոզիչ է և հանրաճանաչ հեղինակ, որը հայտնի է Աստծո Խոսքին իր անզիջում մոտեցմամբ: Ջոնը և նրա կինը՝ Լիզան, «Messenger International» ծառայության հիմնադիրներն են: Ծառայությունը նվիրված է Քրիստոսի անզիջում հետևորդների զարգացմանը՝ վերափոխելու մեր աշխարհը: Իսկ տանը՝ Կոլորադոյում, Ջոնին հաճախ կարելի է տեսնել չորս որդիների հետ մրցութային խաղեր խաղալիս և կնոջը համոզելիս, որ սկսի գոլֆով զբաղվել:

MessengerX

Անվճար ներբեռնման և հոսքային հեռարձակման համար այցելեք **MessengerX.com** կայք:

Ցանկանում եք ավելին
Տեսածրեք պատկերակը

Messenger INTERNATIONAL

Գիրքը նվեր է հեղինակից
և վաճառքի ենթակա չէ